Azg
armenian daily

22 ԱՊՐԻԼ 1998 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ #69 (1572)

Դեմիրելի «Կովկասյան գագաթաժողովը»

Սորիլի 26-27-ը Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հրավերով Վրաստանի ղեկավար էր. Շեւարդնաձեի եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւի հարեւան երկիր կատարելիք այցը նվիրված չի լինելու միայն Արդվինի «Դերիներ» ջրամբարի բացման արարողությանը: Թուրքիայի նախագահն իր հրավիրյալների այցը վերածելու է «Կովկասյան գագաթաժողովի», ինչպես արդեն գրում են թուրքական թերթերը, ինչպես մեզ տեղեկացնում է Պոլսում հրատարակվող «Ժամանակը»: Ըստ վերջինիս տեղեկությունների, այդ «գագաթաժողովի» ընթացքում Դեմիրելն իր հրավիրյալների հետ մանրամասնորեն քննարկելու է Բաքու-Ջեյհան նավթուղու ծրագիրը, Վրաստան-Թուրքիա գազամուղի կառուցման հարցը: Բացի դրանից, 3 ղեկավարները Տրապիզոնում խորհրդակցելու են տարածաշրջանի կայունության հարցը եւ մասնավորապես Ռոբերտ Քոչարյանի նախագահ ընտրվելուց հետո դարաբաղյան հակամարտության զարգացման հեռանկարները: Սպասվում է, որ այդ օրերին հրապարակվի Դեմիրելի նոր կոչն ուղղված Հայաստանին «զորքերը հեռացնելու Ադրբեջանի բռնագրավված տարածքներից»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոգնած մարդիկ պետք է հեռանան, ասում է Արմեն Դարբինյանը

Ինն ամիս անց կառավարության աշխատանքը՝ «հորով-մորո՞վ»

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Ես եղել եւ մնում եմ արհեստավարժ կառավարության շաս կոչս կողմնակիցը», իր անդրանիկ ասուլիսում հայտարարեց ՀՀ նորընծա վարչապետ Արմեն Դարբինյանը՝ մասամբ վերջին շրջանում «արհեստավարժ կառավարության մասին շահարկումներին» ի պատասխան հարկ համարելով ներկայացնել նախորդ օրը հրապարակված կառավարության կազմի ընտրության «մայր շարժառիթները»: Արհեստավարժություն, ըստ վարչապետի, նշանակում է պատասխանատվություն իրականացվող քաղաքականության նկատմամբ, թափանցիկություն եւ մատչելիություն հասարակայնության լայն խավերի համար: Նախարարը պետք է լինի ոչ միայն իրականացվող քաղաքականության ջատագովը, այլեւ կազմակերպչական, մարդկային եւ բարոյական չափանիշների կրողը, արժանանա ժողովրդի վստահությանը, հանգի հակառակ դեպքում լավագույն նպատակն անգամ դատապարտված է ձախողման:

Անդրադառնալով «շահարկումների» հաջորդ առարկային կառավարության կազմում կուսակցական գործիչների ներգրավմանը, պարոն Դարբինյանը վերահաստատեց արհեստավարժության սկզբունքը՝ «ներկայացումն» սկսելով դասակցական նախարարներից: Եվ այստեղ, նախարարներն ըստ վարչապետի:

Գիտության եւ կրթության նախարար Լեւոն Մկրտչյան, դաշնակցական, նախարարի պաշտոնն ստանձնելուց հետո սառեցրել է կուսակցական գործունեությունը, պատրաստված է, բանիմաց, լուրջ մասնագետ պատմության ոլորտում, շահեկանորեն է ներկայացել 97 թ. ընդունելության քննություններին, իբրեւ պատմության առարկայական հանձնաժողովի նախագահ: Գլխավոր խնդիրներն են դպրոցի լուրջ բարեփոխում, գիտության ոլորտում պետական մեխանիզմների հստակեցում:

Տարածքային կառավարման հարցերով նախարար Դավիթ Զադոյան. Աժ նախկին պատգամավոր, պաշտոնն ստանձնելուց հետո նախկին երկրապահ, հմուտ, գործադիր մարմիններում «թրծված», տնտեսական ղեկավար, դրական փորձ է կուտակել իբրեւ Արարատի (նախկին) մարզպետ:

Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյան. Աժ (նախկին) պատգամավոր, տաղանդավոր, տարբեր ոլորտներում, ներառյալ իրավաբանությունը, արհեստավարժ անձնավորություն, նախկին փոխնախարարի պաշտոնում ակտիվորեն մասնակցել է դատահրավական բարեփոխումներին, նախարարությունը պիտի դարձնի քաղաքականություն կերտող:

Տես ► էջ 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Արտահերթ նիստ հրատապ հարցերով, իսկ պատգամավորները...

Կապերն ու շաղկապները կուլիսային մեկնաբանությամբ

ՇԱՏԻԼԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Երեկ կայացած Ազգային ժողովի արտահերթ նիստը լիովին նվիրված էր դատահրավական համակարգի բարեփոխումներն առաջնորդող մի շարք օրենքների քննարկմանը:

Մինչ անդրադառնալը բուն օրակարգին, վկայակոչեմ Աժ փոխխոսնակ Յուրի Բախչյանի հայտարարությունն այն մասին, որ պատգամավոր Վարդան Խաչատրյանը դիմել է «Հանրապետություն» խմբակցությունից դուրս գալու կապակցությամբ, իսկ պատգամավորներ Դավիթ Զադոյանը եւ Դավիթ Հարությունյանը վայր են դրել իրենց լիազորությունները նախարարի պաշտոն ստանձնելու պատճառով:

«Այս երկու լուրը «կանոնադրական» առումով որեւէ արձագանք նիստերի դահլիճում չստացավ: Սակայն լայն էին արձագանքները դահլիճի պատերից դուրս:

Վարդան Խաչատրյանը շարքային պատգամավոր չէ, թեկուզ այն պարզ պատճառով, որ Աժ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահն է: Ավելի կարեւորում եմ այն հանգամանքը, որ պրն Խաչատրյանը, հանդիսանալով Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցության գործիչներից մեկը, դուրս գալով «Հանրապետություն» խմբակցությունից ոչ միայն քանակական, այլեւ որակական փոփոխության առիթ ստեղծեց դեռ երեկ իշխող «Հանրապետություն» խմբակցությունում: Այսպիսով, իր կազմում ունենալով արդեն 50 պատգամավոր, խմբակցությունն այսուհետ կգործի առանց Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միության ներկայացուցչական կազմի:

Իմ այն հարցին, թե ինչպես կներկայանա ՔՊՄ-ն Ազգային ժողովում, Վարդան Խաչատրյանը պատասխանեց, որ խումբ կազմել չեն կարող, բայց կուսակցության եռյակով ՔՊՄ-ի քաղաքական գիծը կտանեն:

Այս փոփոխությունը Աժ-ի «կուլուարային» քաղաքականությունն անուղղակիորեն է կապում նոր իշխանությունների եւ կառավարության նոր կազմի ձեւավորման հետ: Իսկ Դավիթ Զադոյանի ՀՀ տարածքային կառավարման նախարար նշանակվելը մնկմաբանվում է երկակի: Մի կողմից, կարծիք կա, որ պրն Զադոյանի նշանակումը նպատակավոր չէ իր անձի համար, քանի որ ակնհայտ է նրան երկրորդական դիրքեր մղելու միտումը: Փաստորեն, ի դեպ, հիմնավոր է թվում, քանի որ ՀՀ տարածքային կառավարման նախարարը մինչեւ այժմ սոսկ «պորտֆելային» նախարար է, որի առաքելություններն ըստ օրենսդրական կարգավորման, հեղհեղուկ են: Սակայն այդ տեսակետը միանշանակ չի կարելի պաշտպանել՝ նկատի ունենալով այն հեռահար ակնկալիքները, որոնք կապված են տարածքային կառավարման համակարգի հստակեցման եւ կատարելագործման հետ:

Տես ► էջ 3



Բրյուսելում ապրիլի 24-ին կբացվի Հայոց ցեղասպանության ցուցահանդես

Հայոց եղեռնի տարեդարձի նախօրեին Երեւանում էին գտնվում վերջերս Բելգիայի Սենատում 1915 թ. ցեղասպանությունը դատապարտող որոշման աջակից երկու գործիչներ՝ մեր հայրենակից Նիկոլայ Դավթյանը եւ Ֆրենկ Շվալբա-Խոսը: Նիկոլայ Դավթյանը «Ազգին» ասաց. «Թեեւ Բելգիայում հայկական համայնքը շատ փոքր է՝ 5000 մարդ, բայց այս տարի առաջին անգամ պատշաճաբար Սենատում ցեղասպանությունը դատապարտող բանաձեւի հարցը բարձրացնելով՝ մեր համայնքը հասավ լուրջ հաջողության: Չկար ոչ մի դեմ սենատոր: 49 «կողմ», 15 «ձեռնպահ» եւ 15 բացակա քվեարկությամբ եվրախորհրդարանից հետո բելգիական խորհրդարանը դատապարտեց 15 թ. Թուրքիայում գործված եղեռնը՝ իբրեւ ցեղասպանություն:

Բրյուսելի կենտրոնական փողոցներից մեկում 1997 թ. հոկտեմբերին կանգնեցվել է Հայաստանից բերված խաչքար՝ իբրեւ ցեղասպանության խորհրդանիշը: Այս ապրիլի 24-ին Բրյուսելում կկազմակերպվի ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես: Ֆրենկ Շվալբա-Խոսն ի պատասխան մեր հարցի՝ խորհուրդ տվեց հատուկ հիշել ոչ թե այն երկրի սենատորներին, որոնք ի պաշտոնե ճանաչել են եւ դատապարտել ցեղասպանությունը, այլ նրանց, ովքեր դեռ հապաղում են՝ Իտալիան, Անգլիան, Ֆրանսիան»...

Ն. Գ.

ԱՊՀ պետությունների ղեկավարների հանդիպումը՝ ապրիլի 29-ին

ՍՈՍԿՎԱ, 21 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՊՀ երկրների պետությունների ղեկավարների հանդիպումը, ինչպես նախատեսվում էր, կկայանա ապրիլի 29-ին Մոսկվայում: Ինչպես ԱՊՀ-ի գործադիր քարտուղարի աշխատակազմում հաղորդեցին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին, այդ ամսաթիվը համաձայնեցված է Համագործակցության երկրների բոլոր նախագահների հետ: Հանդիպմանը իրենց մասնակցությունը հավաստել են ԱՊՀ երկրների 11 նախագահներ, բացառությամբ Ղրղզստանի նախագահ Ասկար Աքաեւի, որն այդ օրերին պաշտոնական այցով գտնվելու է Չինաստանում:

Դումայականները հավաքում են իրենց ճամպրուկները

Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը մեկ անգամ եւս հայտարարեց, որ չի պատշաճի վարչապետի պաշտոնին նախագահ Ելցինի առաջադրած Սերգեյ Կիրիենկոյի թեկնածությունը: Կոմունիստների խորհրդարանական խմբակցության առաջնորդ Գենադի Զյուգանովն ասաց, որ իր կուսակցությունը չի վախենում արտահերթ ընտրություններից, քանի որ եթե Բորիս Ելցինը ցրի Դուման եւ նոր ընտրություններ անցկացնի, ապա նոր Դումայի 90 տոկոսը կկազմեն նախագահի հակառակորդները: Պետդումայի առաջին փոխնախագահ, «Մեր տունը Ռուսաստանն է» խորհրդարանական խմբակցության փոխնախագահ Վլադիմիր Ռիժկովն իր հերթին հայտնեց լրագրողներին, որ Դուման պատրաստ է ցրման տարբերակին: «Իմ զիրքերը գործընկերներիս հետ ցույց տվեցին, որ նրանցից շատերը, օգտագործելով շաբաթ եւ կիրակի օրերը, մեկնել են ընտրատարածքներ եւ սպասել իրենց ընտրողների աջակցությունը: Այնպես որ Դումայի շուրջ կեսն այժմ ճամպրուկներն է հավաքում եւ պատրաստվում է խորհրդարանական արտահերթ ընտրություններին», ասաց Վլադիմիր Ռիժկովը: Հինգշաբթի օրը ՈԿԿ-ի պլենումը վերջնականապես կորոշի կուսակցության դիրքորոշումը Կիրիենկոյի թեկնածության հանդեպ: «Գաղտնի քվեարկության դեպքում Կիրիենկոյի հնարավորությունները բավականին բարձր կլինեն, բաց քվեարկության դեպքում նա շանսեր չի ունենա, եթե պլենումը որոշի քվեարկել Կիրիենկոյի դեմ», ասաց Վլադիմիր Ռիժկովը: Ռուսաստանի Պետդումայի խորհուրդը լրտեսաբթի օրը որոշեց ապրիլի 24-ին վերջին, երրորդ անգամ քննարկել Սերգեյ Կիրիենկոյի թեկնածությունը վարչապետի պաշտոնին: Եթե Դուման նորից մերժի Ելցինի առաջարկը, դումապատանությունը կդառնա անխուսափելի:

Ն. Ի.

Ադրբեջանական կեղծիքներ Հայաստանի եւ հայ ժողովրդի դեմ

ՀՀ ԱԳՆ հայտարարությունը

Վերջին ժամանակներս Ադրբեջանի ղեկավարությունը կեղծիքների եւ զրպարտանքների նոր արշավ է սկսել Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ:

Ադրբեջանում մեկ տարածվում են զանազան սպահող մեղադրանքներ, մեկ առաջ են քաշվում անհեթեթ նկրտումներ մեր երկրի գրեթե ամբողջ տարածքի նկատմամբ, մեկ այլ դեպքում, նույնիսկ ծանակելով պատմական իրողություններն ու առողջ բանականությունը, ադրբեջանական ժողովուրդը ցեղասպանության զոհ է հայտարարվում:

Ադրբեջանում պետական մակարդակով իրականացվող քարոզչական այս քայլերը նպատակ ունեն հասնել դարաբաղյան հիմնախնդրի լուծման սեփական սցենարի իրականացմանը, փորձել մարդկության հիշողությունից ջնջել ներկա հարյուրամյակի ընթացքում Լեռնային Դարաբաղի տարածքում՝ ներառյալ վերջինիս նախկին մայրաքաղաք Շուշիում, ինչպես նաեւ Սումգայիթում, Բաքվում, Գանձակում եւ այլուր հայերի նկատմամբ հետեւողականորեն իրականացված ցեղասպանության ոճրագործությունները: Նման քարոզարշավը ներազդում է նաեւ հենց ադրբեջանական ժողովրդի հոգեբանության վրա, անառողջ կրքեր ու անհիմն հույսեր բորբոքում, ինչն, իր հերթին, խանգարում է ադրբեջանական ղեկավարությանը ճկուն մոտեցումներ հանդես բերելու բանակցային գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունը վճռականորեն դատապարտում է ադրբեջանական իշխանությունների կողմից ձեռնարկվող աղաղակաուցողական քայլերը, որոնք խոչընդոտում են Լեռնային Դարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը: Նման դիրքորոշումը վկայում է ադրբեջանական կողմի անիրատեսական մտադրությունները եւ լուրջ հարցականի տակ է առնում բանակցային գործընթացում առաջընթացի ձեռքբերման հնարավորությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԸՄԲԱՑԻԿ

Սկիզբը էջ 1

ԱԳ նախարար Վարդան Օսկանյան. անցման շրջանի ՀՀ արտաքին քաղաքականության կերտողներից մեկը, բարձր պրոֆեսիոնալ, հրաժարվել է ԱՄՆ քաղաքացիությունից Հայաստանը միջազգային ասյաններում առավելագույնս ներկայացնելու համար:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդուարդ Սանդոյան. արհեստավարժ վարչարար, վարչապետի «բազմամյա թիմակիցը» ԿԲ գծով, ներկայիս բանկային համակարգը կերտողներից մեկը, վարչապետի համոզմամբ, ի վիճակի է իրականացնել կիսաս թողնվածը:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար եւ օպերատիվ հարցերի նախարար Շահեն Կարապետյան. լավագույնս ինքնադրսեւորվել է այդ ոլորտում:

Նորաստեղծ՝ տնտեսական բարեփոխումների եւ կառուցվածքային փոփոխությունների նախարար Վահրամ Ավանեսյան. բարեփոխումների հետեւողական կողմնակից, վարչապետի նույնպես բազմամյա թիմակից, տարբեր ոլորտների բարեփոխումները համակարգելու ներուժ ունի:

Արդյունաբերության եւ առեւտրի նախարար Գառնիկ Նանագուլյան. [illegible] կարիք չկա: Նախարարության [illegible] կառուցվածքային բարեփոխումներ, արդյունաբերության վիճակի կտրուկ բարելավում, ինտեգրացում միջազգային առեւտրական կառույցներին:

Առողջապահության նախարար Գագիկ Ստամբոլցյան. նախարարությունը ղեկավարել է մեկ տարուց պակաս (ասել է թե մեղավոր չէ՞ համակարգի վիճակի համար – Լ. Պ.): Ըստ վարչապետի, համակարգի բարեփոխումներն ուղղակիորեն ձախողվել են, ուստի համակարգի գլխավոր խնդիրը վերականգնումն է, ֆինանսավորման, պետպատվերի եւ վերջինից օգտվելու մատչելիության մեխանիզմների մշակումը:

Էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյան. նրա գլխավորությամբ համակարգը անցել է զարգացման փուլ: Արդեն մոռացվող դժվարագույն եւ դաժան պայմանները հիշելով՝ հարկ է գնահատել նախարարի նախկին գործունեությունը: Այս ոլորտում ոչ մի օր չի կարելի կորցնել, ուստի նախարարին փոխելն, ըստ վարչապետի, «ռիսկային էր, բայց կլիներ»: Միակ վերապահումը համակարգի ներքին ռեսուրսների լիարժեք օգտագործումն է անվերապահ պահանջի «կարգավիճակով»:

Փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Արտակ Վարդանյան. ամենաերիտասարդը կառավարության կազմում, վարչապետին ծանոթ է ուսանողական տարիներից իբրեւ Մոսկվայի համալսարանի լավագույն հայազգի շրջանավարտներից մեկը, տաղանդավոր եւ խոստումնալից անձնավորություն: «Վերջին տարիներին մեծ հաջողությամբ ղեկավարել է Բելառուսի ամենալուրջ փեյջինգային ընկերությունը: Առաջարկել եմ, հրավիրել եմ, երաշխավորում եմ», ասաց վարչապետը:

Սոցաշ նախարար Գագիկ Եգանյան. այդ ոլորտում աշխատանքի երկար փորձ ունի, մասնագիտական անվիճելի հաստանիշներ: Գլխավոր խնդիրը «գերլարված աշխատանքի պահանջող ընտանեկան նպաստների համակարգի հաստատումն է, սոցիալական արդարության սկզբունքի կիրարկումը»:

Սեփականաշնորհման նախարար Պավել Ղալթախչյան. նախարարությունը ղեկավարել է մեկ տարուց պակաս: Գլխավոր խնդիրը կառավարության հաշվետարի (պետական գույքի հաշվառման) գործառույթը [illegible] կառավարմանը հանձնելն է:

Քաղաքաշինության ղեկավար Ֆելիքս Փիրումյան. փորձառու է, տիրապետում է իրավիճակին: Պարտավոր է լուծել խմելու ջրի համակարգի արմատական բարեփոխման եւ կապիտալ ներդրումների ծրագրերի իրականացումը:

Բնապահպանության նախարար Սարգիս Շահազիզյանը բանիմաց է, **գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանը**՝ փորձառու (նախարարության գլխավոր խնդիրը գյուղացու լիարժեք դրսեւորմանը նպաստելը, եղած միջոցներն առավելագույնս օգտագործելն է):

Տրանսպորտի նախարար Երվանդ Զաքարյան. «Տրանսգազ» ՊՁ-ը ղեկավարելու ընթացքում նվազագույնի է հասցրել համակարգի նորմատիվային կորուստները, պինդ ղեկավար է:

Վիճակագրության եւ պետռեգիստրի նախարար Ստեփան Մնացականյան. աշխատել է նախկին գրեթե համանուն վարչությունում: Նախարարությունը տնտեսական իրադարձությունների ետեւից շարժվողից պետք է վերածի առաջանցիկ խնդիրներ առաջադրող կառույցի:

Ուժային նախարարներին, ըստ վարչապետի, ներկայացնելու հարկ չկա: Այնուամենայնիվ, նրա բնորոշմամբ, «առանց Արցախի հերոս **Վազգեն Սարգսյանի** դժվար է պատկերացնել հայկական բանակը», իսկ **Սերժ Սարգսյանը** հայ պետական գործիչների մեջ ամենախոր պետականության զգացում ունեցող գործիչ է, իսկ կառավարությունը «հանձին պաշտպանության նախարարի պետական շահերի լավագույն պաշտպանն ունի»:

Աշակույթի նախկին նախարար **Արմեն Սմբատյանն** «ինքնորոշվել է» հոգուս կոնսերվատորիայի, մինչ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոգնած մարդիկ պետք է հեռանան, ասում է Արմեն Դարբինյանը

մանուկյան. լավագույնս ինքնադրսեւորվել է այդ ոլորտում:

Նորաստեղծ՝ տնտեսական բարեփոխումների եւ կառուցվածքային փոփոխությունների նախարար Վահրամ Ավանեսյան. բարեփոխումների հետեւողական կողմնակից, վարչապետի նույնպես բազմամյա թիմակից, տարբեր ոլորտների բարեփոխումները համակարգելու ներուժ ունի:

Արդյունաբերության եւ առեւտրի նախարար Գառնիկ Նանագուլյան. [illegible] կարիք չկա: Նախարարության [illegible] կառուցվածքային բարեփոխումներ, արդյունաբերության վիճակի կտրուկ բարելավում, ինտեգրացում միջազգային առեւտրական կառույցներին:

Առողջապահության նախարար Գագիկ Ստամբոլցյան. նախարարությունը ղեկավարել է մեկ տարուց պակաս (ասել է թե մեղավոր չէ՞ համակարգի վիճակի համար – Լ. Պ.): Ըստ վարչապետի, համակարգի բարեփոխումներն ուղղակիորեն ձախողվել են, ուստի համակարգի գլխավոր խնդիրը վերականգնումն է, ֆինանսավորման, պետպատվերի եւ վերջինից օգտվելու մատչելիության մեխանիզմների մշակումը:

Էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյան. նրա գլխավորությամբ համակարգը անցել է զարգացման փուլ: Արդեն մոռացվող դժվարագույն եւ դաժան պայմանները հիշելով՝ հարկ է գնահատել նախարարի նախկին գործունեությունը: Այս ոլորտում ոչ մի օր չի կարելի կորցնել, ուստի նախարարին փոխելն, ըստ վարչապետի, «ռիսկային էր, բայց կլիներ»: Միակ վերապահումը համակարգի ներքին ռեսուրսների լիարժեք օգտագործումն է անվերապահ պահանջի «կարգավիճակով»:

Փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Արտակ Վարդանյան. ամենաերիտասարդը կառավարության կազմում, վարչապետին ծանոթ է ուսանողական տարիներից իբրեւ Մոսկվայի համալսարանի լավագույն հայազգի շրջանավարտներից մեկը, տաղանդավոր եւ խոստումնալից անձնավորություն: «Վերջին տարիներին մեծ հաջողությամբ ղեկավարել է Բելառուսի ամենալուրջ փեյջինգային ընկերությունը: Առաջարկել եմ, հրավիրել եմ, երաշխավորում եմ», ասաց վարչապետը:

Սոցաշ նախարար Գագիկ Եգանյան. այդ ոլորտում աշխատանքի երկար փորձ ունի, մասնագիտական անվիճելի հաստանիշներ: Գլխավոր խնդիրը «գերլարված աշխատանքի պահանջող ընտանեկան նպաստների համակարգի հաստատումն է, սոցիալական արդարության սկզբունքի կիրարկումը»:

Սեփականաշնորհման նախարար Պավել Ղալթախչյան. նախարարությունը ղեկավարել է մեկ տարուց պակաս: Գլխավոր խնդիրը կառավարության հաշվետարի (պետական գույքի հաշվառման) գործառույթը [illegible] կառավարմանը հանձնելն է:

Քաղաքաշինության ղեկավար Ֆելիքս Փիրումյան. փորձառու է, տիրապետում է իրավիճակին: Պարտավոր է լուծել խմելու ջրի համակարգի արմատական բարեփոխման եւ կապիտալ ներդրումների ծրագրերի իրականացումը:

Բնապահպանության նախարար Սարգիս Շահազիզյանը բանիմաց է, **գյուղնախարար Վլադիմիր Մովսիսյանը**՝ փորձառու (նախարարության գլխավոր խնդիրը գյուղացու լիարժեք դրսեւորմանը նպաստելը, եղած միջոցներն առավելագույնս օգտագործելն է):

Տրանսպորտի նախարար Երվանդ Զաքարյան. «Տրանսգազ» ՊՁ-ը ղեկավարելու ընթացքում նվազագույնի է հասցրել համակարգի նորմատիվային կորուստները, պինդ ղեկավար է:

Վիճակագրության եւ պետռեգիստրի նախարար Ստեփան Մնացականյան. աշխատել է նախկին գրեթե համանուն վարչությունում: Նախարարությունը տնտեսական իրադարձությունների ետեւից շարժվողից պետք է վերածի առաջանցիկ խնդիրներ առաջադրող կառույցի:

Ուժային նախարարներին, ըստ վարչապետի, ներկայացնելու հարկ չկա: Այնուամենայնիվ, նրա բնորոշմամբ, «առանց Արցախի հերոս **Վազգեն Սարգսյանի** դժվար է պատկերացնել հայկական բանակը», իսկ **Սերժ Սարգսյանը** հայ պետական գործիչների մեջ ամենախոր պետականության զգացում ունեցող գործիչ է, իսկ կառավարությունը «հանձին պաշտպանության նախարարի պետական շահերի լավագույն պաշտպանն ունի»:

Աշակույթի նախկին նախարար **Արմեն Սմբատյանն** «ինքնորոշվել է» հոգուս կոնսերվատորիայի, մինչ վարչապետի «ինքնորոշումը» նախարարի նշանակման առումով դեռեւս առջեւում է:

«Կառավարությունն առանց կանանց» իրողության վերաբերյալ վարչապետը նկատեց. «Դեռ ուշ չէ», իսկ մեր հարցին «Կարելի՞ է ենթադրել, որ այդ պաշտոնում, այնուամենայնիվ, Ալվարդ Պետրոսյանը կնշանակվի», պատասխանեց. «Ենթադրել ամեն ինչ կարելի է, մանավանդ լրագրողներին»:

«Աշխատելու եմ նոր կոնցեպցիայով, թե՞ օգտագործելու եմ հինը», հարցին՝ իր պատասխանն պարունակ Դարբինյանն ասաց. «Ես սիրում եմ կառուցել, ոչ թե փորփրել ավերակները», իսկ վարչությունների պետերի փոփոխությունների վերաբերյալ հարցին արձագանքեց. «Հոգնած մարդիկ պետք է հեռանան, մեզ աշխատողներ են պետք»:

«Որքա՞ն ժամանակ է պետք, որպեսզի ժողովուրդն զգա նոր կառավարության աշխատանքը» հարցին վարչապետը առավելագույնս հստակ պատասխանեց. «Ինն ամիս, դա բիոլոգիապես արդարացված ժամկետ է»:

Ավելացնենք, որ վարչապետի կարծիքով, «այս կառավարությունում ինտելեկտի գործակիցն էականորեն գերազանցում է նախորդներին», ինչը թույլ է տալիս լավատես լինել: Այնուամենայնիվ, եթե մեկ տարի անց «ծտերը հաշվելու ընթացքում» պարզվի, որ նախարարությունների առջեւ դրված խնդիրները թերակատարվել են, կառավարության կազմը կարող է վերանայվել:

Հողմակայաններն ընդդեմ ատոմակայանի

«Եվրոպայում եւ ԱՄՆ-ում արդեն մի տասնամյակ է, ինչ ոչ մի նոր ԱԷԿ չի կառուցվում, զարգացած երկրներից բացառությունը Ճապոնիան է... Եթե ես հայ լինեի, ապա խորապես վիրավորված կլինեի զարգացած երկրների ծգտմամբ եւ առաջարկներով Հայաստանում կառուցել նոր ԱԷԿ», ասաց Ֆրեն Շվալբա-Խոսը: Բնապահպանության ոլորտում իրազեկության ծրագրի (TEAP) ավագ փորձագետը: Երեկ TACIS-ի շրջանակներում TEAP-ն ՀՀ Ազգային ժողովի հետ համատեղ կազմակերպել էր խորհրդարանական բաց հանդիպում, ուր քննարկվեց կովկասյան տարածաշրջանի ամենակարեւոր եւ արդիական խնդիրներից մեկը էներգիայի այլընտրանքային աղբյուրների որոնումը: Արտասահմանյան փորձագետները առաջարկեցին Հայաստանում պահպանությունը տալ հողմային էներգիայի կիրառման հեռանկարին: Շվեյցարացի պրոֆեսոր Արմին Ռելլերը ներկայացրեց Գերմանիայում եւ Շվեյցարիայում հողմակայանների արտադրության եւ կիրառման արդյունավետությունը: ՀՀ էներգետիկայի նախարարության ներկայացուցիչը պնդեց Հայաստանում նոր ԱԷԿ կառուցելու մեկնակետը, ինչն էլ հարուցեց փորձագետների ընդդիմությունը: Պրն Շվալբա-Խոսը սրամտորեն նշեց. «Սուրբ ծննդի նախօրեին ունեւորներն իրենց հին ունեցվածքը նվիրում են առավել չունեւորներին, ազատվելով ավելորդությունից, այդպես էլ զարգացած երկրները: Դա գիտականորեն կոչվում է հնացած տեխնոլոգիաներից ազատում: Նոր ուղիներ փնտրեմ»: Բայց ցանկացած որոնում գումար արժե:

Կան միջազգային շատ կազմակերպություններ, որոնք պատրաստ են բնապահպանական ներդրումներ կատարել եւ ֆինանսավորել հողմատուրբինների եւ հողմակայանների արտադրությունը, իսկ համիները Հայաստանում փչում են: Աժ պատգամավոր Վազգեն Սաֆարյանը կատակեց. «Հայաստանում Նյու Վասյուկի կկառուցենք», ինչպես Օսատ Իբրահիմիչը «Ոսկե հորթում»: ՀՀ Աժ բնապահպանության, սոցիալական ապահովության եւ առողջապահության հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը, որը խորհրդակցության կազմակերպիչներից էր, առավել զուսպ լավատես էր: «Հանդիպումը խոստումնալից է եւ կարող է հետագայում նպաստել էներգիայի այլընտրանքային աղբյուրների ոլորտում շարունակական աշխատանքների ծավալմանը»:

Ն. Ղ.

ՀԱՄԱՌՈՏ

Պարույր Հայրիկյանը՝ պետա-իրավական բարեփոխիչ-խորհրդական

Երեկ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունել է ԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանին եւ Ազգային ժողովի ԻՄ խմբակցության քարտուղար Ներսես Զեյնալվանդյանին: Ինչպես տեղեկացրին ԻՄ լրատվական ծառայությունից, Ռոբերտ Քոչարյանը Պարույր Հայրիկյանին առաջարկել է պետական-իրավական համակարգի բարեփոխումների գծով նախագահի գլխավոր խորհրդականի պաշտոնին զուգահեռ ստանձնել ՀՀ նախագահին կից մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պարտականությունները:

Քոչարյանը եւ իր թիմը, ինչպես Նապոլեոնը եւ իր գեներալները

Աժ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը խորհրդարանում հնչող հարցերին եւ մեկնաբանություններին ի պատասխան, թե Ռ. Քոչարյանի կառավարությունում տեղ են գտել «ծերմակ օձիքով», «ռուսաստաններում կրթություն ստացած, անփորձ» երիտասարդներ, ասաց. «Երբ Նապոլեոնը հավաքում էր իր գեներալիտետը, նրան ասում էին՝ ովքեր են Մյուրատը, Նեյը՝ ռազմական փորձ չունեցող դեմքեր: Նապոլեոնը պատասխանում էր. «Մտնենք մարտի մեջ, հետո կերեւա»: Ահա եւ, ըստ իս, Ռոբերտ Քոչարյանի սկզբունքը: Հիշեցնեմ նաեւ, որ ավելի ուշ, երբ Նապոլեոնից հետաքրքրվում էին, թե չի՞ վախենում արդյոք նա՝ իրեն շրջապատելով խելացի եւ հզոր դեմքերով, արձագանքում էր. «Քանի որ ես ամենախելացին եմ, ուստի չեմ վախենում ինձ խելացիներով շրջապատել»: Անշուշտ, պրն Դալլաքյանը չհաղթեց նշել, որ այս ամենը Ֆրանսիայի պատմությունից է, Հայաստանում զարգացումներն առավել բազմաշերտ են:

ԱԺՄ-ն կողջունի, եթե...

Աժ պատգամավորներ եւ ԱԺՄ վարչության անդամներ Դավիթ Վարդանյանն ու Սեյրան Ավագյանը խորհրդարանում երեկ **«Ազգին»** տեղեկացրին, որ իրենք կողջունեն Ռոբերտ Քոչարյանի նոր իշխանության այն քայլերը, որոնք ուղղված կլինեն Հայաստանի քաղաքական համակարգը կուսակցությունների վրա հիմնելուն, կուսակցություններն ուժեղացնելուն եւ եվրոպական տիպի քաղաքական համակարգի ձեւավորմանը. «Բոլոր այն քայլերը, որոնք տանում են դեպի մի մարդու կամքից կախված պետություն, ընդունելի չեն: Կան մի շարք լակմուսներ, որոնք շուտով ցույց կտան, թե ինչպիսի նպատակներ ունի ներկա իշխանությունը. ա) ընտրական օրենսգիրքը՝ հանձնաժողովների կազմության սկզբունքով եւ ամենակարեւորը՝ համամասնական-մեծամասնական ընտրակարգի հարաբերակցությամբ, բ) սահմանադրական փոփոխությունները՝ Ազգային ժողովի լիազորությունների ավելի հստակեցում եւ գ) հեռուստատեսային մենաշնորհի վերացում: Եթե պետական հեռուստատեսությունը շարունակելու է պահպանել իր գործելակերպը, ապա դա անընդունելի նպատակների արտահայտություն է:

Ազատվեց փոխնախարարի պաշտոնից

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի որոշմամբ, Արմեն Գեւորգյանն ազատվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնից: Նա այդ պաշտոնը զբաղեցնում էր 1996 թվականի հուլիսից:

18-ամյա երիտասարդը՝ կայծակի զոհ

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Ապրիլի 20-ին, ժամը 20-ին Աղարան քաղաքի մերձակա դաշտում, անասուններ արածացնելիս, կայծակնահար է եղել 18-ամյա Սեւակ Հովսեփյանը եւ տեղում վախճանվել: Այդ մասին ասացին ՆԳ եւ [illegible] դեպքն առաջինը չէ: Անցած գարնանը եւս նույն տեղում կայծակը մեկ մարդու կյանք էր խլել:

Ապրիլի վերջին Հայաստանում ձյուն է տեղում

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ՝ Այսօր առավոտյան Հայաստանի հյուսիսի լեռնային որոշ շրջաններում ձյուն է տեղացել: Ինչպես հայտնեցին ՀՀ հիդրոմետկենտրոնում, այդ հանգամանքը պայմանավորված է հանրապետության տարածքով անցած սառը հոսանքով, որը առաջ տեղումների, այդ թվում ձյան պատճառ դարձավ: Ձյան ամենաառաջ տեղումները գրանցվել են Կոտայքի շրջանի Ֆոնտան գյուղում: Իսկ Հայաստանի մայրաքաղաքում ապրիլի 20-ից հետո անձրեւ տեղաց: Եղանակի լավացում սպասվում է միայն ապրիլի 24-ից: Իսկ մինչ այդ հիդրոմետկայանը անձրեւ է կանխատեսում՝ հնարավոր է, ձյան հետ: Հանրապետության գյուղտնտեսության նախարարության մասնագետների կարծիքով, եղանակի նման վատացումը կարող է բացասաբար ազդել աղտաք բերքի վրա:

ԱՐՄԱՎԻՐ

Առաջին արտադրական անտառը Հայաստանում

Արմավիրի անտառտնտեսության տարածքի շուրջ 18 հա տարածքում հիմնադրվեց ամերիկյան արագաճ բարդու արտադրական տնկադաշտ: Այս մասին «ԱՈԿԱ» գործակալությանն ասաց գլխավոր անտառապետ եւ «Հայանտառ» պետական ձեռնարկության առաջին տնօրեն Ռուբեն Պետրոսյանը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի ազգային ակադեմիայի բուսաբանական ինստիտուտի, «Հայանտառ» պետական ձեռնարկության եւ Ամերիկայի հայ ճարտարագետների եւ գիտնականների միության համատեղ ջանքերով: Ամերիկյան կողմից ուղարկվել է 1700 բարդու տնկի: Ինչպես ասաց Ռ. Պետրոսյանը, 10-12 տարեկան արտադրական տնկադաշտերի 1 հա-ից կարելի է սպանել շուրջ 400 խմ բնափայտ, որի ավելի քան 60 տոկոսը շինափայտ կլինի: «Սա առաջին փորձն է Անդրկովկասում եւ նման ծրագիրը շարունակելի է, որը կնպաստի Հայաստանում փափկատերեւ բնափայտի պահանջարկը բավարարելուն: Ինչ վերաբերում է բնական անտառատարածքներին, ապա այս տարի նախատեսվում է 2900 հա տարածքում անտառվերականգնման աշխատանքներ կատարել, որից 400 հա՝ ծառատունկ, իսկ 2500 հա տարածքում՝ բնական վերածի օժանդակող միջոցառումներ: Անտառները կվերականգնվեն այն բոլոր մարզերում, որտեղ անտառտնտեսություններ կան», ասաց Ռ. Պետրոսյանը:

ԱՈԿԱ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յողովը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱՓԻԿ

ՊԱՇՏՈՒՍԿԱԼ ՊԱՏԱՍԽԱՆ

«Հայաստան» հիմնադրամը հերքում է

Մեծարգո դարուն գլխավոր խմբագիր

Ձեր թերթի այսօրվա (21.04.98 թ.) համարում տպագրված է Վահրամ Աղաջանյանի տեղեկատվությունը, որը, մեղմ ասած, աղաւաղեկատվություն ու թյուրիմացություն է, իսկ, ուղիղ ասած, սադրանք: Կարծում ենք, որ չճշտված տեղեկություններով հրապարակում անելուց առաջ, ճիշտ կլիներ հարցնել անել խնդրո առարկա հիմնարկության համապատասխան ծառայությանը առաջին հերթին թերթին անհարմար վիճակի մեջ չդնելու համար:

Ո՞րն է թյուրիմացությունը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երբեք չի ունեցել մասնաճյուղ: Հիմնադրամի գործադիր վարչությունը ԼՂՀ-ում ունեցել է ներկայացուցիչ: Ներկայում ԼՂՀ-ում գործադիր վարչության ներկայացուցիչն է Բորիս Ալախվերդյանը:

Ո՞րն է սադրանքը:

Քանի որ չի եղել մասնաճյուղ, որեմն չէր կարող լինել դրա փակման մասին Լեռն Տեր-Պետրոսյանի կարգադրությունը: Քանի որ չի եղել մասնաճյուղ, եւ չի եղել կարգադրություն, որեմն չեղած կարգադրությունը չէր կարող որեւէ նշանակություն հետապնդել:

Եթե այս ամենը չի համոզում Ձեզ ու նյութի հեղինակին, սույն նամակի հետ ուղարկում ենք հիմնադրամի անցած երկու տարիների տարեկան հաշվետու հաղորդագրությունները (թարգմանչուհուց 2-ական օրինակ) Ծառայությունը եւ հանդիպում, թե [illegible] -գրասենյակը չեն կարող [illegible] Երեւանում եւ դարձյալ թե դրանց ո՞ր մասն է հաստատվել ԼՂՀ ծրագրերին:

Հիշեցնեմ նաեւ, որ նույն 1995 թ.-ից հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ են եղել ԼՂՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու վարչապետ Լեւոնարդ Պետրոսյանը, իսկ գործադիր վարչության անդամ է եղել նախկին փոխվարչապետ, ներկայումս Ստեփանակերտի քաղաքապետ Յուրի Ղազարյանը: Ավելացնենք նաեւ, որ այսօր, ապրիլի 21-ին, հիմնադրամի գործադիր վարչության տնօրենի դաշտոնակատար Սամվել Ենգոյանի հետ ունեցած հեռախոսազրույցում ԼՂՀ փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանը ԼՂՀ կառավարության անունից դաշտոնապես հերքել է Վահրամ Աղաջանյանի տեղեկատվությունը:

Խնդրում եմ այս նամակը որպես դաշտոնական դատասխան առանց փոփոխությունների տպագրել «Ազգ» օրաթերթի վաղվա համարում:

Հարգանքով՝
ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ
Հիմնադրամի հանրային
կապերի բաժնի վարիչ
21 ապրիլ 1998 թ.

Խմբ. կողմից- Նույնությամբ կատարում ենք պրն Տ. Պասկեւիչյանի խնդրանքը «առանց փոփոխությունների» տպագրում ենք նրա «դաշտոնական դատասխանը», անգամ չարաշարելով «Հայաստան» հիմնադրամի ԼՂՀ վարչության ներկայացուցչի ազգանունը, որ պետք է լիներ Առուշանյան- Կարծում ենք, որ թյուրիմացությունն առաջացել է մենք մերժում ենք «սադրանք» որակումը) մասնաճյուղ-վարչություն օփորից: Իսկ ինչ վերաբերում է ԼՂՀ ծրագրերի համար հիմնադրամի հատկացրած միջոցներին, դրա առայժմ ծանոթանում ենք անցած 2 տարիների տարեկան հաշվետու հանդեսների բովանդակությունը, որոնց համար շնորհակալություն:

Արտահերթ նիստ հրատապ հարցերով...

Սկիզբը էջ 1

Այնուամենայնիվ, նշանակման ներքո եւ «աջ», եւ «ձախ» դաշտպանավորները դիտում են կառավարության կազմում վերահաստատված ՀՀ դաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի եւ նրա «էլեկտրատի» դիրքերի հետագա ամրապնդման միտումը, քանի որ դրն Զաղոյանը ընտրվել է Արարատի թիվ III ընտրատարածքից, այսինքն այն վայրերից, որտեղ համարվում են դրն Սարգսյանի ազդեցության միջնաբերդը: Ուստի կարծիք կա, որ բափուր դաշտպանավորական տեղը շուտով կգրավի «Երկրապահ» դաշտպանավորական խմբի մի նոր հավակնորդ, իսկ Արարատի մարզդեպ կնշանակվի դրն Սարգսյանի մեկ ուրիշ համախոհը:

Ընդհանրապես կառավարության կազմը դաշտպանավորների ուշադրությունը բավականին շեղել է օրինաստեղծ գործընթացից, ինչի դաշտճառով նիստերի դահլիճը խիստ նոսրացած էր:

Դաշտպանավորները հավաքվում էին այստեղ քվեարկությունից քվեարկություն՝ դրանց միջեւ ընկած ժամանակը անցկացնելով դահլիճի նախասրահում, ճաշարանում կամ աշխատասենյակներում, կառավարության կազմը քննարկելով՝ անդամ առ անդամ:

Այսպիսին է այն ԱԺ-ի ճակատագիրը, որն ըստ ՀՀ Սահմանադրության, միայն կաբինետային ասեկոսեներով կարող է իր վերաբերմունքը դրսեւորել նոր նախարարական կազմի շուրջը:

Ինչպես: Այս ու այն նշանակումների շուրջ մտքեր փոխանակելով նաեւ մամուլի ներկայացուցիչների հետ, դաշտպանավորները այս ու այն քաղաքական, անձնական կապ ու շաղկապ, ուղղակի եւ անուղղակի լոբիզմի դրսեւորումներ էին փնտրում: Ըստ այդմ կառավարությունը բաժանվում է մի քանի թիմերի: Օրինակ, ասենք, «ուժայինների թիմ» (երկու Սարգսյաններ+Զաղոյան), Դարբինյանի թիմ (Ավանեսյան, Սանդոյան), «հին գայլերի եւ հին կապերի թիմ» (Մովսիսյան, Մարտիրոսյան, Գագիկ Եգանյան) եւ այլն:

Գրեթե բոլորը տարակուսանք էին հայտնում Ստեփան Մնացականյանի (ՀՀ վիճակագրության, տեսչական ոեգիստրի եւ վերլուծության նախարար), Երվանդ Զաքարյանի (ՀՀ տրանսպորտի նախարար), Արտակ Վարդանյանի նշանակման կապակցությամբ, համարելով նրանց «մութ ձիուկներ»: Գրեթե բոլորը բացատրում էին Լեւոն Մկրտչյանի նշանակումը ՀՅԴ-ի լումա նոր քաղաքական իրողությունում ըստ արժանվույն ընդգծելու միտումով... Եվ գրեթե բոլորը զարմանում էին՝ ինչու մյուս «իշխող» քաղաքական ուժերը հեռու դահլիճից նախարարների կաբինետից: Ինչու, ասենք, կոմկուսը, վաստակելով ի դեմս նախագահի թեկնածու Սերգեյ Բաղալյանի տասը տոկոսից ավելի ընտրազանգվածի ձայներ, չարժանացավ գոնե մեկ «սոցիալական ոլորտի» պորտֆելի:

Սակայն, բացի քաղաքականացված «ինչու»-ներից, կային եւ ուրիշ անդաստասխան հարցադրումներ: Օրինակ, այն որ արժանիքների, արածչարածի համար վերահաստատվեցին նոր կաբինետում դրն Փիրումյանը, Ղալբախչյանը, Շահազիզյանը, Կարամանուկյանը եւ Սամբոլցյանը...

Երկու կարծիք էր անվիճելի: Մեկը՝ Դավիթ Հարությունյանի (ՀՀ արդարադատության նախարար) եւ Վարդան Օսկանյանի (ՀՀ արտաքին գործող նախարար) արհեստավարժության ու անաղարտության մասին, իսկ երկրորդը...

Գտնելով կաղեր ու շաղկապներ համարյա բոլոր նշանակումների ստվերում, դաշտպանավորները եւս մի կաղ ի հայտ բերեցին Արմեն Դարբինյանի կառավարության համակարգում: Այն է՝ թեկածուների կաղի բացակայությունը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Առաջին հայացքից ժխտական այդ կաղն անհերքելի է: Սակայն մտովի վերադառնալով նախարարների կազմին, փորձենք տրամաբանորեն դատաստանել, կարելի՞ է արդյոք այս կազմն անվերադարձորեն բնորոշել որպես ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիմը...

Օրենսդրական գործընթաց

Ինչ մնում է արտահերթ նիստի բնական առաջադրությանը... Երկրորդ ընթերցմամբ ընդունվեց եւ տեղափոխվեց երրորդ ընթերցման «ՀՀ-ում դատավորի կարգավիճակի մասին» օրենքը, որը մինչ այդ ենթարկվել էր մի շարք փորձաքննությունների: Մասնավորապես, նախագիծն ուսումնասիրվել է ՀՀ դատավորների միության կողմից, ՀՀ փաստաբանների կոլեգիայում, ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնում, ՀՀ իրավագետների եւ քաղաքագետների միությունում, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում...

Օրենքը սահմանում է դատավորի կարգավիճակը, կարգավիճակի միասնությունը, ինչի համաձայն ՀՀ դատավորներ են օրենքով սահմանված կարգով նշանակված առաջին ատյանի, վերաքննիչ դատարանների նախագահներն ու դատավորները, վճռաբեկ դատարանի նախագահը, դրա պալատների նախագահները եւ դատավորները:

Ինչպես օրենքն է ասում, «դատավոր է հանդիսանում այն անձը, ով սահմանադրությամբ սահմանված կարգով օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ եւ իր պաշտոնեական պարտականություններն իրականացնում է մշտական հիմունքներով»:

Ըստ օրենքի, դատավորներն անկախ են եւ արդարադատություն իրականացնելիս, հաշվետու չեն որեւէ մարմնի առաջ: Դատավորին կարգադրություն է ենթարկում արդարադատության խորհուրդը: Սակայն ով եւ ինչպես կարող է այդ խախտումներն ի հայտ բերել, անձամբ ինձ համար այդպես էլ պարզ չդարձավ: Քանի որ...

Օժտելով դատավորին լայն, կարելի է ասել, անսահման իրավունքով, լինել Աստծո չափ ինքնուրույն եւ Աստծո նման անձեռնմխելի, մյուս կողմից օրենքն իր 6-րդ հոդվածով արգելում է անգամ լրատվամիջոցների «ցանկացած միջամտությունը դատավորի գործունեությանը»: Ավելին, հոդվածի հաջորդ դրույթն ամրագրում է, որ «դատավորը պարտավոր չի բացատրություններ տալ իր վարույթում գտնվող գործի կամ նյութի էության վերաբերյալ կամ տրամադրել դրանք ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով»:

Համաձայնվեք, օրենք է իդեալական դատավորների համար: Բայց որտեղից գտնենք այդպիսի դատավորներ եւ ինչ անենք մամուլի ազատությունների կապակցությամբ: Եվ սա այն պայմաններում՝ երբ դատավորները դատավարում են մինչեւ ծերություն, անփոխարինելի պաշտոնյայի կարգավիճակով:

Ո՞վ եւ ինչպե՞ս կփրկի հասարակությանը դրամաբորբ եւ ոչ արհեստավարժ դատավորից:

Կուզենայի լսել հարցերս պատասխանը քննարկումների ընթացքում: Սակայն այդպիսիք գրեթե չծավալվեցին ոչ «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի շուրջը, ոչ էլ մյուս կարեւոր օրենքների, ասենք՝ ՀՀ քրեական օրենսգրքի (հատուկ մաս), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (հատուկ մաս), կամ թե «Փաստաբանության մասին» օրենքի նախագծի: Նիստերի դահլիճը գրեթե դատարկ էր, ինչը թույլ չտվեց անգամ քվեարկություններ անցկացնել օրենքների առաջին ընթերցմամբ ընդունելու նպատակով:

Այսօր արտահերթ նիստը կշարունակվի, եւ հուսով եմ, որ ես, ինչպես եւ դաշտպանավոր Արշակ Սադոյանը, կտանանք որոշ հարցերի որոշ դատասխաններ:

Ինչո՞ւ Արշակ Սադոյանը: Պարզվեց, որ «Փաստաբանության մասին» օրենքի նախագծի շուրջ դրն Սադոյանն ունի երեք տասնյակ հարցեր, որոնք կանոնակարգային երեք հոդեի ընթացքում տեղավորել անհնար է:

Այս դեպքում կուզենայի, որ դրն Սադոյանի ջանասիրությունն օրինակ ծառայեր որոշ դաշտպանավորների համար:

Ուշարակեցու անվան համալսարանը սեփական շենք ունեցավ

Արագածոտնի մարզի Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի անունը կրող մասնավոր համալսարանը ապրիլի 18-ին հանդիսավոր կերպով նշեց կրթօջախի շենքի (նախկին պիոներ պալատի շենքը) սեփականացման վավերացումը: Սա հանրապետության երկրորդ ոչ պետական բուհն է, Երեւանի Հր. Աճառյանի անվան համալսարանից հետո, որ այսուհետ կունենա դարաշրջանների անցկացման համար սեփական շենք՝ անկախ գործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:

Միջոցառմանը հավաքված էին Աշտարակի քաղաքապետ Կարեն Գեւորգյանը, որը մեծապես նպաստել էր համալսարանի հիմնադրմանն ու շենքի հատկացմանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Ներսես եպս. Կոճոյանը, ակադեմիկոս Պիոն Հակոբյանը եւ ուրիշներ:

Շենքի օծումից հետո ուսանողները հանդիսավոր երդում տվեցին բարձր պահել համալսարանի ուսանողի եւ շրջանավարտի պատիվը, ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնել ի սպաս հայրենի քաղաքի բարգավաճման:

Համալսարանի պատվավոր նախագահ Մարտին Գրիգորյանը խոսեց գոյության չորս տարիների ընթացքում համալսարանի ձեռքբերումների մասին: Առաջին տարվա համեմատությամբ քառապատկվել է սովորողների թիվը (այսօր համալսարանն ընդգրկում է 250 ուսանող), բարձրացել է ուսման առաջադիմությունը, համալսարանական բերք է հրատարակվում:

Համալսարանը միաժամանակ ապահովում է թե՛ մեծ թվով երիտասարդության բարձրագույն ուսումնառությունը, Երեւանի բուհերի լավագույն մասնագետների դասախոսությունների ունկնդրումը տեղում, եւ փորձում լուծել հատկապես երիտասարդ ուժերի ըստ մասնագիտության աշխատանքներ ձեռք բերելու խնդիրը:

Դրվատանքի իր խոսքն ասաց համալսարանի հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ պրոֆեսոր Հենրիկ Էդոյանը: Նա նշեց, որ կրթությունն ինքն է եկել այստեղ, եւ խանգարող ոչինչ չկա շրջանի մտավոր պոտենցիալի զարգացման, մասնագետների պատրաստման համար: Սա ժողովրդի հոգեւոր վերելքի վկայությունն է:

Շնորհավորական խոսք ասաց նաեւ ակադեմիկոս, պրոֆեսոր Պիոն Հակոբյանը:

Միջոցառման վերջում համալսարանի չորս լավագույն ուսանողներ պարգեւատրվեցին հատուկ կրթաթոշակով՝ առաջին անգամ սահմանված թեմի առաջնորդարանի կողմից:

ՀԱՍՄԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Եկեղեցանվեր ձեռնարկում Օշականում

Արագածոտնի թեմը Հայաստանի նորակազմ հոգեւոր թեմերից է: Եվ չնայած նրա հազիվ երկամյա պատմությանը՝ Ս. Մեսրոպ Մաշտոց առաջնորդանիստ եկեղեցուն մեծ աղեղն ամբողջացել է վանական տղավորիչ համալիր, որը ներառում է նորակառույց դպրատունը եւ անցյալ հոկտեմբերին շահագործման հանձնված Առաջնորդարանը: Ինչպես թեմական առաջնորդ Ներսես եպս. Կոճոյանը նշեց, մինչեւ 2001 թվականը իրենց թեմը կկարողանա բարեկարգված ու պատշաճ ձեւով ներկայանալ աշխարհի տարբեր կողմերից այստեղ ժամանող ուխտավորներին:

Վանական համալիրի լիարժեք կենսագործունեությանը, սակայն, շատ էր խանգարում խմելու ջրի բացակայությունը: Դիմացի սարալանջից ջրատար անցկացնելու ծախսատար գործի հովանավորությունը վերցրեց Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդը, որի կարեւորագույն խնդիրներից մեկը բոլոր հեյան օգնությունն է հայաստանյան նորակազմ թեմերին:

Երեկ Ս. Մաշտոցի դպրատան

կամարակապ սրահում ստորագրվեց շինարարական համապատասխան պայմանագիր մասնակցությամբ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Վիգեն եպս. Այվազյանի եւ «Բաղրամյանշին» ԲԲԸ գործադիր տնօրեն Գագիկ Վարդանյանի: Ըստ դրա 3-4 ամսից մոտակա լեռնալանջին կկառուցվի 150 խմ տարողությամբ ջրամբար եւ կանցկացվի 680 մ երկարությամբ ջրագիծ:

ՀՕՖ-Ի ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ցեղասպանություն-83

Հայոց ցեղասպանության ճանաչումը ժամանակի հրամայականն է

1. Միջազգային կազմակերպություններ, որոնք չեն շրջանցել իրողությունը

Ընթերցողներին հետաքրքրում են Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցերը, որոնց մեր խնդրանքով պատասխանում է Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի տնօրեն ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցը լայնամասշտաբ նշելը սփյուռքահայ համայնքներում եւ հայրենիքում խթան հանդիսացավ հետագա տարիներին 20-րդ դարի առաջին ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար:

Առաջին հզոր ձայնը, որը հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին, հնչեց 1968 թվականին, 64 երկրների եւ 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսում:

Սակայն այս հարցում կարեւորագույն նշանակություն ունի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վերաբերմունքը:

Դեռեւս 1973 թ., երբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության եւ պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվում էր ցեղասպանությունները կանխելու եւ պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, ներկայացված բանաձեւի 30-րդ ենթակետը Օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակավորում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

Այդ զեկուցումը, որը միաձայն ընդունվեց ենթահանձնախմբի քննարկման ժամանակ, 1974 թ. ներկայացվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանին: Թուրքիայի եւ մի շարք այլ երկրների ներկայացուցիչները պահանջեցին հանել բանաձեւի 30-րդ ենթակետը: Զեկուցումը վերադարձվեց [illegible] 1978 թ. ՄԱԿ-ի եւ [illegible] դեռեւս 1973 թվականին 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձեւի նախագծին, սակայն ամբողջությամբ զեկուցումից հանեց ցեղասպանության մասին արձանագրված պաշտոնական մասը, որտեղ հիշատակվում էր նաեւ հայերի ցեղասպանությունը: Մեկ տարի անց՝ 1979 թվականին, նույն բանաձեւը ներկայացվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը:

Ձայների մեծամասնությամբ որոշվեց վերականգնել 30-րդ ենթակետը: ՄԱԿ-ը վեց տարի անց արդեն վերջին անգամ դարձյալ հիշեց հայոց ցեղասպանությունը, երբ 1985 թվականի հուլիսի 2-ին իր հանձնաժողովի 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձեւի 24-րդ ենթակետում «1915-1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակեց որպես ցեղասպանության օրինակ:

1984 թ. ապրիլի 13-16-ը Փարիզում տեղի ունեցավ Ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջան, որը քննարկեց հայերի ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում, որտեղ ասվում է.

ա) Հայ ազգաբնակչությունը հանդիսացել ու հանդիսանում է մի ժողովուրդ, որի անհատական, այնպես էլ հավաքական հիմնական իրավունքները միջազգային իրավունքի հիման վրա պարտավոր էին եւ պարտավոր են հարգել:

բ) Հայ ազգաբնակչության բնաջնջումը տեղահանությամբ ու ջարդով, 1948 թ. դեկտեմբերի 9-ին ցեղասպանության ոճրի կանխարգելման ու պատժելիության համաձայնագրի համաձայն կազմում է անժամանցելի մի ոճիր...

գ) Երիտթուրքերի կառավարությունը հանցավոր է որպես այս ցեղասպանության հեղինակ, որը վերաբերում է 1915-1917 թթ. կատարված արարքներին:

դ) Հայկական ցեղասպանությունը նաեւ մի «միջազգային ոճիր» է եւ թուրքական պետությունը պարտավոր է ստանձնել նրա պատասխանատվությունը, առանց փորձելու պատրվակներ ներկայացնել, իր գոյության ընթացքում տեղի ունեցած որեւէ ընդհատման համար, այդ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

ե) Այս պատասխանատվությունից հետեւում է գլխավոր պարտավորությունը՝ պաշտոնապես ճանաչել այս ցեղասպանության իրողությունը, դրանով իսկ նաեւ հայ ժողովրդի կրած վնասները:

զ) Միացյալ ազգերի կազմակերպությունը եւ նրա անդամներից յուրաքանչյուրը իրավասու են պահանջել այս ճանաչումը եւ հայ ժողովրդին օժանդակել այս նպատակի համար:

Դեռեւս 1983 թ. Եվրախորհրդարանի քաղաքական հանձնաժողովը որոշում ընդունեց հայկական հարցի քաղաքական լուծման մասին եւ ներկայացրեց Եվրախորհրդարանի քննարկմանը: Միայն չորս տարի անց Եվրախորհրդարանն անդրադարձավ այդ հարցին եւ 1987 թվականի հունիսի 18-ին ընդունեց հատուկ բանաձեւ «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»:

Ինչպես արձանագրված է բանաձեւի ներածական մասում, Եվրոպայի խորհրդարանը բանաձեւ ընդունելիս հաշվի էր առել ներքոհիշյալ հանգամանքները, ըստ որոնց.

1. Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի պատմության ճանաչումը ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական եւ կրոնական փոքրամասնության:

2. Հայերը ելնելով Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. ընդունած կոնվենցիայի հիմնադրույթներից, 1915 թ. կոտորածները որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն:

3. Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն եւ դրանով իսկ զրկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից:

4. Մինչեւ այժմ պաշտոնականորեն առաջադրված հայկական ցեղասպանությունը չի եղել քարկվել քաղաքական դատապարտման եւ չի ստացել իր համապատասխան հատուցումը:

5. Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումն այսուհետեւ պետք է դիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը:

6. Թուրքիայի իրավահաջորդ կառավարությունների անհաշտ դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը:

Եվրոպայի խորհրդարանի որոշումը հիմնականում ներառում էր հետեւյալ հարցադրումները.

ա) Հայկական հարցը, ինչպես նաեւ Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի եւ Եվրոպական տնտեսական համագործակցության միջեւ գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում եւ Թուրքիայում ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել միայն այն պայմանով, երբ նա ճանաչի եւ հարգացնի իր պատմությունն իր իսկ երկրում առկա էթնիկական եւ մշակութային այլազանությամբ:

բ) 1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի համաձայն հանդիսանում են ցեղասպանություն:

գ) Ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար եւ գտնում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որեւէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:

դ) Եվրոպական խորհուրդը պետք է ճնշում գործադրի ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի նա ճանաչի 1915-17 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը եւ դրանով նպաստի քաղաքական երկխոսության հաստատումը Թուրքիայի եւ հայերի լիազոր պատվիրակների միջեւ:

ե) Ներկայումս Թուրքիայի կառավարության կողմից հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության գործադրած ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարվելը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաեւ քրդական իրադարձությունների ժխտումը, Թուրքիայում իսկական պառլամենտական ժողովրդավարության բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենն անհաղթահարելի արգելքներ են եվրոպական տնտեսական համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

զ) Եվրոպական խորհրդարանը նկատի ունենալով հայ ժողովրդի ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը գարգացնելու նրա ցանկությանը՝ որպես փոքրամասնություն իր իրավունքները պահպանելու եւ անարգել օգտվելու մարդու եւ քաղաքացիների իրավունքներից:

է) Խորհրդարանը վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի եւ կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք եւ հանդես է գալիս պատմական հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաեւ թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին, ցանկություն է հայտնում, որ եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

ը) Թուրքիան պետք է պահպանի իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923 թ. Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները:

թ) Ժամանակակից Թուրքիայի տարածքում հուշարձանների պահպանությունը, ինչպես նաեւ թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների, մասնավորապես Օսմանյան կայսրությանը մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

ժ) Կոչ անել եվրոպական տնտեսական համագործակցությանը՝ Թուրքիայի հետ համագործակցել նաեւ մշակույթի ասպարեզում, նրա տարածքում գտնվող քրիստոնեական կամ այլ, ինչպես օրինակ դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան եւ ուրիշ քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

ժա) Վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից ի գործ դրվող բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչական ծեւերը, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդի համար, եւ հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

ժբ) Կոչ է անում եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին հրաժարվելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների եւ մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները:

ժգ) Վավերացնում է իր պարտավորությունը՝ իրապես նպաստելու հայ եւ թուրք ժողովուրդների միջեւ բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

Թուրքիան փաստորեն ելնելով այն իրողությունից, որ, ինչպես եվրոպական խորհրդարանը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպությունը, իրավական տեսանկյունից սանկցիաների կիրառման իրավունքներով օժտված չեն, ընդհանրապես հրաժարվեց բանաձեւի գոյության փաստն ընդունելուց:

ՏԵՍԱԿՈՒՄ

Ա. Բուլավկո. Հայերը պետք է կոնկրետ առաջարկներ անեն հրեա համայնքին

Ֆրանսիայի հրեական հաստատությունների ներկայացուցչական խորհուրդը (ՀՀԽՄ) հիմնվել է 1943 թ. Դրա փոխնախագահ Անրի Բուլավկոն «Ֆրանս Արմենի» ամսագրի թղթակցին տված հարցազրույցում իր տեսակետներն է արտահայտում հայերի 1915 թվի ցեղասպանության, պատմաբան Բեռնարդ Լյուիսի, Իսրայել-Թուրքիա կապերի վերաբերյալ: Նա մասնավորապես ընդգծում է, որ ֆրանսահայերը պետք է կոնկրետ եւ հիմնավոր առաջարկներ ներկայացնեն ՀՀԽՄ-ին եւ հրեական համայնքին:

– Հայ եւ հրեա ժողովուրդները ունեն իրենց սփյուռքը եւ ցեղասպանության են ենթարկվել: Ձեր կարծիքով հայերը եւ հրեաները պե՞տք է արդյոք համատեղ պայքար մղեն:

– Ես կհիշեցնեմ մի բան, որը հիշ է հայերի լայն հանրությանը: Երբ պատերազմից հետո ես Փարիզում կազմակերպեցի Աուստերլիցի համակենտրոնացման ճամբարում ողջ մնացած ախտորյալների առաջին ցույցը, դոկտոր Մարկ Դվորժեցկին՝ «Գետտո արեւելքում» գրքի հեղինակը հայտարարեց. «Եթե թույլ չտրվեին հայերի կոտորածները, թերեւս չէր լինի Աուստերլիցը»: Թեեւ դա փոքր-ինչ հաղթեպ արված ձեւակերպում էր, քանզի իրավիճակները լրիվ նույնը չէին, բայց սկզբունքորեն ճիշտ էր: Այս տեսանկյունից մենք մի քանի տարի առաջ հանդիպեցինք հայ գործիչների հետ, եւ ես կարծում եմ նրանց համոզեցինք, որ կան իրենց խնդիրներին սկանջալուր մարդիկ: Կարծեմ մենք դրանից հետո մշտապես միասին չենք աշխատել, քանի որ հայերը առավելապես պահանջում են սկզբունքային հայտարարություններ, իսկ մենք դրանք չենք արել: Ի դեպ, հրեական համայնքը պարտավորություն չի ստանձնել այս կամ այն գործի համար, բայց որոշ կազմակերպություններ կարող են մասնակցել կոնկրետ գործողությունների:

– Դուք պայքարում եք Ֆրանսիայի ազգային ճակատի դեմ, որը ժխտում է հրեաների ցեղասպանությունը: Ձեզ համար հայերի ցեղասպանության ժխտումը արդյո՞ք նույնքան անհանդուրժելի է:

– Ղոկտոր Դվորժեցկու արտահայտությունը շատ հասկանալի է եւ ուժի մեջ է մնում քանզի նա ակնարկել էր հրեաների ողջակիզմանը նախորդած հայոց ցեղասպանությունը, թեեւ Աուստերլիցից փրկված հրեայի համար երբեմն դժվար է համեմատություններ ընդունելը: ՀՀԽՄ-ի ախտորյալ հրեաների համար, սակայն, ախ՝ թեմայով վեճ կամ վիճարկություն չի եղել: Ամեն անգամ, երբ խնդիրը մեզ առաջադրվել է, մենք դրական պատասխան ենք տվել հայերին:

– Բայց 1994 թ. ժխտողական Բեռնարդ Լյուիսի դատավարության ժամանակ ՀՀԽՄ-ն մանավանդ աչքի ընկավ իր լռությամբ:

– Եթե մենք ուղղակի բանավեճ սկսեինք Բեռնարդ Լյուիսի հետ, դա կառաջացներ ոչ թե սկզբունքային, այլ դիրքորոշման հետ կապված խնդիրներ: Մեզ փորձագետներ էին պետք վիճարկվող վավերագրերի հետազոտման համար: Բայց մենք այդուհանդերձ չլռեցինք: Ես հայ ներկայացուցիչների հետ մասնակցեցի երկու ժողովի եւ այն զգացումը չունեցա, թե այդ առիթով մեզնից պահանջում են դատապարտել Լյուիսին: Հասկանում եմ, որ առկա է հոգեբանական խնդիր. հայերը իրենց մեկուսացված են զգում եւ կարեւոր համարում խոշոր կազմակերպությունների աջակցությունը: Բայց հարկավոր է, որ դուք մեզ ներկայացնեք նախագծեր:

– ՀՀԽՄ-ն այժմ կարո՞ղ է հայոց ցեղասպանության հարցում Իսրայելի հանդեպ հաստատուն դիրք բռնել, նկատի ունենալով Թուրքիա-Իսրայել ռազմաքաղաքական մերձեցումը:

– Իսրայելի դեպքում նման դիրքորոշումը շատ դժվար կլինի: Մեր համայնքի մի մասը դա կմերժի: Մեզ կհասկացնեն, որ պետք է զգույշ լինենք Իսրայելի կենսական շահերը վիճարկող որեւէ բան ասելուց առաջ: Ի դեպ, ՀՀԽՄ-ի արտերկրային միակ պարտավորությունը եղել է մարդասիրականը: Դուք կարող եք մեզ կանգնեցնել մի խնդրի առջեւ, որը ոչ միայն պատմական իրողության ճանաչում է, այլեւ քաղաքական պարտավորություն:

– Լիոնի նախկին արքեպիսկոպոս Բալանը եւ Փարիզի արքեպիսկոպոս Լյուսիժեն հրապարակավ արտահայտվել են 1915 թ. դեպքերի առնչությամբ: Ինչո՞ւ ռաբբիները նույնը չեն անում:

– Հայերի որեւէ պատվիրակություն հանդիպե՞լ է Ֆրանսիայի հրեաների գլխավոր ռաբբի Ժոզեֆ Սիտրուկի հետ: Բնականաբար, ես չեմ կարող խոսել ռաբբիների անունից եւ դժվարանում եմ նրանց մեղադրել, թե չեն արձագանքել այն խնդրանքին, որն իրենց չի հասցեագրվել: Անձամբ ես դեմ չեմ Ֆրանսիայի հրեաների եւ հայերի հանդիպման կազմակերպմանը:

Գ. Ռ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Արդյունաբերության ավելի քան հարյուր գործարարներ արդեն սկսել են եվրոպական դրամական միավորի կիրառման դեմ: Երանի պատրաստվում են հանդես գալ համատեղ հայտարարությամբ, որտեղ նշված կլինեն իրենց գլխավոր մտահոգությունները: Գործարար շրջանակների հայտնի ղեկավարները վճռականորեն փորձելու են ցրել այն «առասպելը», իբր Սիթին ամբողջովին պատրաստանում է միասնական եվրոյի կիրառումը, մինչդեռ հավաստիացնում են բրիտանական արդյունաբերության կոնֆեդերացիայի անդամները:

Ամռանը նախատեսված խոշոր իրադարձության ժամանակ, որը պետք է հեռարձակվի երկրով մեկ, նրանք հրապարակելու են իրենց «մանիֆեստը», որտեղ նշվելու են եվրոյի կիրառման դեպքում երկրին սպառնացող վտանգները փողի արժեզրկում, հարկերի ավելացում, մրցակցության նվազում եւ լոնդոնյան հոչակավոր Սիթիի բիզնեսի միջազգային կենտրոնի խորտակում:

Տասնյակ ճանաչված գործարարներ, օրինակ, հյուրանոցների տեր Ոկկո Ֆորտը, ֆինանսիստ Ջոն Կրեյվնը, CBI-ի նախկին տնօրեն Ջոն Բենհամը եւ Ռոբերտ Մակլոյան ՍՊԸ-ի տնօրեն Ալան Մակլոյանը, արդեն իսկ պատրաստվել են ասել կանգնել հակաեվրո արշավին: Նրանց սրանում են նաեւ Դիմսանգի նախագահ Ստենլի Կալմսը, Բրիտիշ Լեյլանդի նախկին նախագահ Սայրլ Էդուարդսը եւ բարեգործ էմանուել Կեյը:

Արշավը, որը կազմակերպված է պահպանողական խորհրդարանական Սայրլ Սփայսերի ղեկավարած եվրոպական ուսումնասիրության կենտրոնի կողմից, մեծ հարված է լինելու վարչապետ Թոնի Բլերի եւ կանցլեր Գորդոն Բրաունի համար: Պարզվում է, որ հուլիսի 3-ին Լոնդոնի «Կաֆե Ռոյալում» մեկնարկվող ընդդիմության ալիքը լուրջ անհանգստություն կդառնա նախարարներին, որոնք մինչեւ վերջերս պնդում էին, թե գործարարները միահամուռ պատրաստանում են միասնական դրամանիշի կիրառումը: Սիթիում նույնիսկ սկիզբ է առել դրամահավաքման մի գործընթաց, որի նպատակն է եվրոյի հարցով հանրաքվեի ժամանակ լուրջ ընդդիմություն ձեւավորել:

Ըստ Սայրլ Էդուարդսի, արդեն իսկ մեծ գումարների ներդրումներ եղել են այդ նպատակով: «Եվրոյի նկատմամբ հսկայական թերահավատություն կա», նշել է նա «Դեյլի թելեգրաֆի» լրագրողին: Իսկ Մակլոյանը չի կարծում, թե եվրոյի առավելությունները գերակշռում են: «Ես վստահեցնում եմ, որ երկրից հզոր կարծիքներ կստեղծվեն: Բրյուսելը պարզապես չունեն խոսելու ամբողջ գործարար աշխարհի ներկայացուցիչների անունից: CBI-ը բաղկացած է մի շարք բազմազգ ընկերություններից, որոնք տարբեր մոտեցումներ ունեն», ասում է նա: «Ոչ եվրոյին» արշավը արտահայտում է գործարար շրջանակների աճող մտահոգությունները, որ նոր դրամական միավորի ետեւում թաքնված են առավել լուրջ տնտեսական եւ քաղաքական նպատակներ:

«Ես շատ եմ մտահոգ: Հնարավոր չէ դրամական քաղաքականությունը առանձնացնել ֆինանսական ընդհանուր քաղաքականությունից», ասում է լորդ Բորդմենը, որը վերջերս միացել է հակաեվրո շարժմանը: Նա պատրաստվում է ելույթ ունենալ հուլիսին: «Կառավարությունն իր քարոզչական ամենահզոր մեքենաներն է օգտագործում մարդկանց համոզելու համար: Եվրոպան էլ մյուս կողմից, հսկայական գումարներ է ծախսում այդ նպատակով: Անհրաժեշտ է, որ բոլոր թերահավատներն իրենց ձայնը բարձրացնեն եւ արտահայտվեն», կոչ է անում նա: Կայանալիք կոնֆերանսին մասնակցելու է նաեւ Ուիլյամ Հեյգերը, որն իր «ուժեղ հակաեվրո» ելույթով փորձելու է աղացուցել, որ քորիներն են իսկական բիզնեսի կուսակցությունը: Դրանով նա վերջ է դնելու այն ասեկոսեներին, թե ոմանների ազդեցության տակ պահպանողականները զիջելու են իրենց դիրքերը:

Մյուս կողմից, շարունակում է ուժեղանալ «փրկենք ֆունտը» նշանաբանով ազգային արշավը, որի շրջանակներում լորդերի պալատի անդամ Փիրսոնը ճակատագրային հանդիպումներ է կազմակերպում քաղաքագետների եւ գործարարների հետ համապատասխան ռազմավարություն մշակելու համար: Ավելի քան քսան «Եվրո-սկեպտիկ» խմբավորումներ համաձայնել են միասնաբար գործակցել ընդդեմ Թոնի Բլերի եվրոմետ քաղաքականության:

ԱՆԳԼԻԱ

Գործարար շրջանակները միանում են ընդդեմ եվրոյի

Քաղաքական մեկնաբան Ռ. Միլվեստրը վերոհիշյալ խորագրի ներքո անգլիական հեղինակավոր «Դեյլի թելեգրաֆ» թերթի ապրիլի 6-ի համարում գրում է միասնական դրամական միավորի կիրառման դեմ Անգլիայում ծավալվող ալիքի մասին:

«Ինչպես հավաստիացնում են բրիտանական արդյունաբերության կոնֆեդերացիայի անդամները:

Ամռանը նախատեսված խոշոր իրադարձության ժամանակ, որը պետք է հեռարձակվի երկրով մեկ, նրանք հրապարակելու են իրենց «մանիֆեստը», որտեղ նշվելու են եվրոյի կիրառման դեպքում երկրին սպառնացող վտանգները փողի արժեզրկում, հարկերի ավելացում, մրցակցության նվազում եւ լոնդոնյան հոչակավոր Սիթիի բիզնեսի միջազգային կենտրոնի խորտակում:

Տասնյակ ճանաչված գործարարներ, օրինակ, հյուրանոցների տեր Ոկկո Ֆորտը, ֆինանսիստ Ջոն Կրեյվնը, CBI-ի նախկին տնօրեն Ջոն Բենհամը եւ Ռոբերտ Մակլոյան ՍՊԸ-ի տնօրեն Ալան Մակլոյանը, արդեն իսկ պատրաստվել են ասել կանգնել հակաեվրո արշավին: Նրանց սրանում են նաեւ Դիմսանգի նախագահ Ստենլի Կալմսը, Բրիտիշ Լեյլանդի նախկին նախագահ Սայրլ Էդուարդսը եւ բարեգործ էմանուել Կեյը:

Արշավը, որը կազմակերպված է պահպանողական խորհրդարանական Սայրլ Սփայսերի ղեկավարած եվրոպական ուսումնասիրության կենտրոնի կողմից, մեծ հարված է լինելու վարչապետ Թոնի Բլերի եւ կանցլեր Գորդոն Բրաունի համար: Պարզվում է, որ հուլիսի 3-ին Լոնդոնի «Կաֆե Ռոյալում» մեկնարկվող ընդդիմության ալիքը լուրջ անհանգստություն կդառնա նախարարներին, որոնք մինչեւ վերջերս պնդում էին, թե գործարարները չի կարծում, թե եվրոյի առավելությունները գերակշռում են: «Ես վստահեցնում եմ, որ երկրից հզոր կարծիքներ կստեղծվեն: Բրյուսելը պարզապես չունեն խոսելու ամբողջ գործարար աշխարհի ներկայացուցիչների անունից: CBI-ը բաղկացած է մի շարք բազմազգ ընկերություններից, որոնք տարբեր մոտեցումներ ունեն», ասում է նա: «Ոչ եվրոյին» արշավը արտահայտում է գործարար շրջանակների աճող մտահոգությունները, որ նոր դրամական միավորի ետեւում թաքնված են առավել լուրջ տնտեսական եւ քաղաքական նպատակներ:

«Ես շատ եմ մտահոգ: Հնարավոր չէ դրամական քաղաքականությունը առանձնացնել ֆինանսական ընդհանուր քաղաքականությունից», ասում է լորդ Բորդմենը, որը վերջերս միացել է հակաեվրո շարժմանը: Նա պատրաստվում է ելույթ ունենալ հուլիսին: «Կառավարությունն իր քարոզչական ամենահզոր մեքենաներն է օգտագործում մարդկանց համոզելու համար: Եվրոպան էլ մյուս կողմից, հսկայական գումարներ է ծախսում այդ նպատակով: Անհրաժեշտ է, որ բոլոր թերահավատներն իրենց ձայնը բարձրացնեն եւ արտահայտվեն», կոչ է անում նա: Կայանալիք կոնֆերանսին մասնակցելու է նաեւ Ուիլյամ Հեյգերը, որն իր «ուժեղ հակաեվրո» ելույթով փորձելու է աղացուցել, որ քորիներն են իսկական բիզնեսի կուսակցությունը: Դրանով նա վերջ է դնելու այն ասեկոսեներին, թե ոմանների ազդեցության տակ պահպանողականները զիջելու են իրենց դիրքերը:

Մյուս կողմից, շարունակում է ուժեղանալ «փրկենք ֆունտը» նշանաբանով ազգային արշավը, որի շրջանակներում լորդերի պալատի անդամ Փիրսոնը ճակատագրային հանդիպումներ է կազմակերպում քաղաքագետների եւ գործարարների հետ համապատասխան ռազմավարություն մշակելու համար: Ավելի քան քսան «Եվրո-սկեպտիկ» խմբավորումներ համաձայնել են միասնաբար գործակցել ընդդեմ Թոնի Բլերի եվրոմետ քաղաքականության:

ԱԴՐԲԵՋԱՆ

Իրանը եւ կաշառքների չափերը խոչընդոտում են արեւմտյան նավթային ծրագրերը

Հայտնի է, որ Ադրբեջանի նավթային ծրագրերում ամերիկյան նավթային ընկերությունները առաջատար դիրքեր են գրավում եւ շատ տեղերում տիրում են բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթին: Այնուհանդերձ, Մ. Նահանգներին չի հաջողվում, չնայած գործադրված ջանքերին, ներգրավվել Կասպից ծովի ադրբեջանական հատվածի հարավային՝ Իրանին սահմանամերձ մասի նավթային ծրագրերում:

Ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնյաները մասնավոր զրույցներում բացատրում են, որ իրանական կողմը կտրականապես դեմ է դրան, քանի որ իրանցիները վախենում են, թե ամերիկացիները կարող են նավթային աշտարակներն օգտագործել լրտեսական նպատակներով: Բաքվի անկախ վերլուծաբանները ամերիկացիների բացակայությունը բացատրում են ոչ միայն Իրանի ճնշմամբ, այլ նաեւ Բաքվի ցանկությամբ՝ հետագայում այդ նավթը արտահանել Իրանի տարածքով: «Իսկ ինչո՞ւ այդ նավթը արտահանել Ռուսաստանի կամ Վրաստանի տարածքներով, եթե այդ նավթի կարիքը զգում է Իրանի հյուսիսը: Տնտեսապես չափազանց ձեռնտու է այդ նավթը ուղարկել իրանական էնզելի տերմինալ: Նույնիսկ խողովակաշար կառուցելու կարիք էլ չի լինի», BBC-ի Բաքվի թղթակցին բացատրեց «Թուրան» գործակալության նավթային հարցերով փորձագետ Իլհամ Շաբանը, որի հետ համաձայն է նաեւ մեկնաբան Էլմար Հուսեյնովը: Այնպես որ, այդ նավթային ծրագրերին Բաքուն ըստ ամենայնի կներգրավի Արեւմտյան Եվրոպայի, Ճապոնիայի եւ Հնդկաստանի նավթային ընկերություններին: Սակայն ներդնողներին, ըստ «Ֆայնենշոնլ բայս» թերթի, խիստ մտահոգում է Ադրբեջանում տիրող կացությունը, որտեղ օրեցօր աճում են կաշառքների չափերը: Եթե նախկինում Բաքվում որեւիցե գործ բացելու համար պահանջվում էր 30 հազար դոլարի կաշառք, ապա այժմ ադրբեջանցի պաշտոնյաների կաշառաչափը հասել է 120 հազար դոլարի: «Ադրբեջանցիները ավելի են ագահանում», նկատում է Բաքվում աշխատող արեւմտյան մի դիվանագետ: Կաշառակերությունը վանում է արեւմտյան ներդնողներին, որոնց համբերության բաժակը լցվել է: Նրանք իրենց կառավարությունից պահանջում են փոխել կացությունը: Իսկ ադրբեջանցի կաշառակերներն ամենեւին չեն թաքցնում իրենց հարստությունները եւ ցուցադրում են արտասահմանյան շքեղ մեքենաներն ու բանկարժեք կոստյումները՝ ստեղծելով ներքին լարվածություն այդ երկրում, որտեղ յոթից մեկը փախստական է, իսկ մեծամասնությունը չքավոր, գրում է բրիտանական պարբերականը:

Պատրաստեց
ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆԸ

Թուրքիա-Վրաստան հարաբերությունների հնարավոր վատթարացո՞ւմ

«Ազատություն» ռադիոկայանի քաղաքական մեկնաբան Լիզ Ֆուլերը վերջերս անդրադարձել է Թուրքիա-Վրաստան հարաբերություններին՝ վերհանելով երկու երկրների միջեւ գոյություն ունեցող լուրջ տարակարծությունները: Ըստ մեկնաբանի, վրացիների մեծամասնությունը կասկածանքով է վերաբերվում թուրքական ներկայությանը երկրում: Այսպես, 1996 թ. ծախողվեց Վրաստանում թուրքական համալսարան բացելու ծրագիրը, հարցականի տակ է Թուրքիայի առաջարկած մի շարք ծրագրերի իրագործումը, որոնցից կարեւորագույնը Վրաստան-Թուրքիա հիդրոէլեկտրակայանների կառուցումն է սահմանային Ճորոխ գետի վրա: Նախատեսվում է կառուցել 11 ամբարտակ, որն, ըստ փորձագետների, [illegible] Վրաստանի [illegible] մը: Վրացի պատգամավորներն անընդունելի են համարում բնապահպանական վնասների փոխարեն 5 մլն դոլար հատկացնելու Թուրքիայի կառավարության առաջարկը, քանի որ տարեկան վնասը կկազմի 1,7 մլն դոլար: Ինչպես հայտնի է, ապրիլի 26-ին էդ. Շեւարդնաձեն եւ Աջարիայի խորհրդարանի նախագահ Ա. Աբաշիձեն կմասնակցեն առաջին ամբարտակի կառուցումը սկսելու արարողությանը:

«ՈՒՅԹԵՐ»-«ԵՐԵՎԱՆ»

Կուրիլյան կղզիների հարցում հոնկոնգյան տարբերակ չի լինի

20 ԱՊՐԻԼ, BBC: Ռուսաստանի մամլո քարտուղար Յասսրժեմբսկին հայտարարեց, որ Կուրիլյան կղզիների հարցում Ռուսաստանին չի բավարարում հոնկոնգյան տարբերակը: Նա հրաժարվեց հաստատել կամ հերքել ճապոնական աղբյուրներից ստացված այն հաղորդագրությունը, թե ճապոնիայի վարչապետ Հաշիմոտո Բորիս Ելցինի հետ հանդիպման ժամանակ առաջարկել է տարածային վեճի կարգավորման հենց այս տարբերակը, այսինքն, քարտեզներում նորից նշել Կուրիլյան կղզիները որպես ճապոնիայի մաս, սակայն կղզիների ղեկավարությունը անորոշ ժամանակով թողնել Ռուսաստանին՝ մինչեւ կղզիների հանձնումը ճապոնիային: Յասսրժեմբսկին նորից շեշտեց, որ Ելցինը սահմանադրության երաշխավորն է, իսկ սահմանադրությունը պահանջում է երկրի տարածային ամբողջականություն:

Ճապոնիան դարձյալ ռեկորդակիր

Բացվել է աշխարհի ամենաերկար կախովի կամուրջը

Տոկիոյում ապրիլի 5-ին բացված աշխարհի ամենաերկար կախովի կամրջի վրայով մեկ ժամում 5-350 ավտոմեքենաներ երթեւեկեցին, հայտնում է «Ինտերֆեքսը» հեռագրային տիրույթ» թերթը, ավելացնելով, որ 3,911 մետր երկարությամբ նորակառույց Ակասի Կաիկյո կամուրջը Ակասի նեղուցի վրայով ճապոնիայի չորս գլխավոր կղզիներից ամենափոքրը՝ Սիկոկուն, միացնում է ամենամեծին՝ Հոնսյուին: Դրանով ավարտվում է բոլոր կղզիներն իրար միացնող ավտոճանապարհային ցանցի ծրագիրը: Երկու հենարանների միջեւ ընկած տարածքը 1,991 մետր է, որը 581 մետրով ավելի է Անգլիայում Համբեր գետաբերանի վրա ձգվող այժմ արդեն նախկին ռեկորդակիր կամրջից:

Նոր կամուրջը, որը կառուցված է 1995 թ. հունվարին, Բոբի նավահանգիստը քարուքանդ արած եւ ավելի քան 6 հազար մարդկանց կյանք խլած երկրաշարժի էպիկենտրոնի մոտ, նախատեսված է դիմանալու Ռիխտերի սանդղակի 8,5 բալի ուժգնության երկրաշարժի: Նման երկրաշարժի ժամանակ կամուրջը կառուցման ընթացքի մեջ էր եւ չի վնասվել: Կամրջի գլխավոր հենարաններն իրենց բարձրությամբ (297 մետր ջրի մակարդակից) նույնպես նոր ռեկորդ են սահմանել աշխարհում:



Շինարարությունը սկսվել էր 1988-ի մայիսին: Ընդհանուր արժեքը մոտ 3-7 միլիարդ դոլար է եղել: Ակնկալվում է, որ կամրջի վրայով օրական կերթեւեկեն 30 հազար մեքենաներ, որոնցից յուրաքանչյուրը պետք է վճարի մեկ երթի համար 19,25 դոլար:

Բացման արարողությանը մասնակցել են գահաժառանգ Նարուհիտոն եւ կինը՝ իշխանուհի Մասակոն: Տեղացի գործարարները մեծ հույսեր են կապում կամրջի հետ: Նախատեսվում է, որ շրջանային տնտեսության վրա դրական օգտագործումը 150 միլիարդ իենի ազդեցություն կգործի: Դայվա բանկի ուսումնասիրությունների կենտրոնի տվյալներով, Սիկոկու կղզին տարեկան հավելյալ 12 միլիարդ իենի եկամուտ պետք է ունենա: Տեղական իշխանությունները սպասում են, որ այդ վայրերն այցելող զբոսաշրջիկների քանակը տարեկան 1,6 միլիոնից կհասնի 2,3 միլիոնի:

Ս. Օ.

ԱՊՀ տարածքում մարտին գրանցվել է լրագրողների իրավունքների խախտման 200-ից ավելի դեպք

ՄՈՍԿՎԱ, 21 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս տարվա մարտին Հրապարակայնության պաշտպանության հիմնադրամը գրանցել է լրագրողների եւ մամուլի իրավունքների խախտումների 200-ից ավելի դեպք:

Ինչպես հաղորդել է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, ամենաաղաղակող փաստերի թվում է «Բրյանսկիե իզվեստիա» մարզային թերթի քաղաքականության բաժնի խմբագիր Իվան Ֆեդյունինի սպանությունը մարտի 31-ին Բրյանսկում: Մահվանից փոքր-ինչ առաջ նա անանուն սպառնալիքներ էր ստացել հեռախոսով:

Բացի այդ, «մարտի իրադարձությունը» եղավ Բելառուսում տարածված մի փաստաթուղթ, որով պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներին խորհուրդ էր տրվում պաշտպանական փաստաթղթերը, ինչպես նաեւ դրանց մեկնաբանությունները հանձնել միայն զանգվածային լրատվության պետական միջոցներին: Այդ փաստաթուղթը խախտում է Բելառուսի սահմանադրությունը, այդ հանրապետության օրենքը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին, ինչպես նաեւ Բելառուսի վավերացրած միջազգային համաձայնագրերը:

Նկատվել են նաեւ Տաջիկստանի Հանրապետության նախագահի պատվի եւ արժանապատվության պաշտպանության մասին Տաջիկստանի խորհրդարանում օրինագծի ընդունման, Մերձդնեստրում Ռուսաստանի հեռուստատեսության նկարահանող խմբի կալանման փաստեր:

Ռուսաստանում գրանցվել են 99 սուր վեճ եւ իրավախախտում, որոնց թվում լրագրողներին ծեծելու չորս դեպք, խմբագրական շենքերի կողոպտման ու հրդեհման հինգ դեպք, 26 դատական հայց զանգվածային լրատվության միջոցների խմբագրությունների եւ 15 հայց կոնկրետ լրագրողների դեմ, տեղեկատվություն տարածելուց հրաժարվելու 10 փաստ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Վերջապես դայեմք իմքներս մեզ

Ուշադրություն հեռուստէկրանի գեղագիտությանը

Տուսով կբոլորի մեկ տասնամյակը, ինչ վայելում ենք մեր անկախությունը: Ի՞նչ ենք շահել, ինչ ենք կորցրել մենք, մշակույթի գործիչներս: Տարողունակ թեմա է՝ համախումբ հարցերով: Այսօր մեծ մտահոգության առարկան հեռուստատեսությունն է, որ նույնպես հսկայական բնագավառ է: Դիտելով մեր հեռուստատեսության հաղորդումները, զգում ես, որ մի եռանդուն, կարող սերունդ է եկել, որը սակայն չունի նախորդների ոչ փորձը, ոչ գիտելիքները, ոչ արհեստավարժությունը, բայց գործ անելու մղում ունի: Մեղք ունի՞, որ խարխափում է Չի՞ ուզում սովորել, «աշխարհն իրենո՞վ է սկսում», թե՞ պարզապես չկան մարդիկ, ումից պիտի սովորի: Չէ՞ որ հիմա մենք ենք մեր տերը, ոչ հսկող, ոչ արգելակող կա, ոչ էլ օգնող: Չկա՞ն, ինչո՞ւ, չէ՞ որ մի մեծ զանգված՝ թատերական, կոնսերվատորիայի եւ բանասիրականի ընտրանին, սկսեց այս գործը եւ նվիրվեց, որոնումով, սխալվելով ու հայտնագործելով ստեղծեց այս բնագավառի գեղագիտությունը, սիրեց ուրիշներին այնքան հաշվի նստել իր հետ, որ նախկին միութենական մրցույթների գլխավոր ու առաջին տեղերն իրեն զիջել: Իսկ այսօր կարծես շաս բան զրոյից է սկսվում:

Հեռուն չգնանք. մարտի 28-ին վարչապետ, նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի հետ երիտասարդ Աննա Թերջանյանի վարած հարցազրույցը օրինակ էր այն բանի, թե ինչպիսին չպիտի լինի հարցազրույցը:

Ի՞նչ են եղել «ավագները», չկա՞ն, բայց կան եւ ուրիշ փորձառու հեղինակ-հաղորդավարներ (Ռոբերտ Մավիսակալյան, Վահրամ Մարտիրոսյան, Արտավազդ Եղոյան, Կարեն Հոչարյան, Ալրսա Քալանթարյան, Գարիկ Ղազարյան, էլի կան), ումից կարելի է սովորել: Իսկ գուցե «լսող ականջ» չունե՞ն...

Երբ խորհում ես 40 տարում ստեղծվածի ու կորածի մասին՝ սիրտդ սեղմվում է: Ոչ միայն մեծ ջանքեր են կորել, այլեւ մենք ենք անդառնալի կողոպտվել: Հեռատես չենք եղել: Ժամանակին նույնիսկ նախագահի մակարդակով մեր ծրագիրը՝ թատրոնի վարպետների արտումից որոշ հատվածներ կինոժապավենի միջոցով փրկելու եւ սերունդներին հանձնելու՝ չիրագործվեց. մե՛ր տիրույթում ստեղծված «Երեւան» կինոմիավորումը նախապատվեց մի երկրորդ կինոստուդիա դառնալ, քան իր արտադրության մի մասով մշակույթի արժեքներ ստեղծել՝ մեր մեծերին պահպանելու եւ սերունդներին մեր ա՛յդ հարստությունից չզրկելու համար... Վրդովեցուցիչ չէ՞, որ Վաղարշյանի կոթողային Բուլոչովից միայն 2 րոպե է փրկվել, իսկ Հրաչյա Ներսիսյան-Պաղտասարից՝ 3 րոպե... Այսքան անհոգությո՞ւն սեփական մշակույթի հանդեպ:

Շատ են լեզվական մեղանչումները: Եթերը լցվել է բարբառային, իսկ ավելի շաս օտար հնչեռանգներով եւ մայրենին հազիվ է ծիկրակում... Իսկապե՞ս «հայերեն բառերով անգլերեն են խոսում», ինչպես դիպուկ նկատեց մեր խոսքի վարպետը՝ Սոս Սարգսյանը: Ավելացնենք մի ահավոր արագախոսություն, որ ոչ ասածն ես հասկանում, ոչ մանավանդ անունները. օտար լեզվին տիրապետելու վարժությունն են ուզում ցույց տալ... Զարմանում ես. մի՞թե այդ նույն սերնդից չեն Անահիտ Հովհաննիսյանը, Նինա Ստուկաչը. էլի կան: Որտե՞ղ կարելի է լսել չեղած մի բառ. «ստեսություն», բարիմաստի մասին խորհո՞ւմ են: Լեզուն առանձին թեմա է, որին պետք է անդրադառնալ առանձին: Հստակ միտքը, գեղեցիկ խոսքը, ախորժալուր ձայնը, բարեսեր արտահայտը պարտադիր են էկրանում: Չի կարելի եթեր մտնել անխնամ հագուկապով, սանրվածքով, ոչ էլ միալար, անգույն, կամ «գլխային», նվնվան-ծվծվան ձայնով: Ընդհանրապես ստուգվո՛ւմ են եթեր մտնողների տվյալները, արտահայտը, խոսքն ու արտաբերման աղարտը:

Սա խնամած պահանջ չէ. էկրանի գեղագիտության կարեւորագույն բաղկացուցիչն է եւ պետք է պահպանի ամեն ոք, ով հարգում է իրեն, իր գործը, այն ժողովրդին, ում առջեւ հանդես է գալիս: Դարձյալ հեռուն չգնանք: Նայենք մանուկներին նվիրված երկու հաղորդաշարերը. «Հեքիաթների դաշտ» եւ «Պուտիկ-ճուտիկը». տեսեք, թե ինչպիսի՞ ջերմությամբ ու հմայքով է այն վարում Նոնա «մորաքույրը» եւ որքա՞ն թոշնած, ալարկոտ ու ֆլեգմատիկ՝ մյուսը: Դիտում ես ու խորհում. գուցե լավ կազմակերպի՞չ է, դրա՞մ է բերում (հիմա դրա նշանակությունն ո՞վ կժխտի). այդ դեպքում մի՞թե վիրավորական կլինի, եթե նմանները թողնվեն իբրեւ հեղինակ-խմբագիր, իսկ տեսքը հանձնել հաղորդավարին: Եթե դրվածքը սկզբունքային լինի՝ ոչ ոք չի վիրավորվի: Ժամանակին ոչ ոք չէր վիրավորվում, երբ հիմնադիրներին եթեր չէին թողնում. իրենք էին գերադասում հաղորդավարին: Մինչեւ իսկ նշանավոր արվեստաբանները նախապատվությունը տալիս էին նրանց...

Չիմանալը մեղք չէ, սովորել չուզենալը, սեփական ունեցածը չիդկելը, եթերի պատասխանատվությունը չզգա՛լն է մեղք: Չեմ ուզում ստեղծվի այն տպավորությունը, թե այսօր հեռատեսիլ եկածները վատն են կամ չեն աշխատում իրենց վրա. այդպիսիք նկատվում ու առանձնանում են եւ եթե անուններ չեմ տալիս՝ ապա նյութի բնույթից եւ, պարզապես, որեւէ արժանավորի մոռանալու վախից: Այդ արժանավորներով է համբավ ստեղծվում այս իրոք հեղինակավոր բնագավառի հանդեպ: Եվ եթե խոսում եմ՝ ապա միայն ուրտ ցավից, որ շաս բան է խեղվել, իսկ առաջին հերթին էկրանի գեղագիտությունը: Այսօր մեր հեղինակ-հաղորդավարները առիթը բաց չեն թողնում ասելու, թե սա զրույց է, երկխոսություն, բայց ո՞վ՝ ո՞ւմ հետ, չի հանգամանվում, իսկ դասելով հաղորդումների ընդհանրական ոճից, զրույց՝ հաղորդավարի եւ իր զրուցակիցների, եթերում գտնվողների միջեւ: Հիմա հասկանալի՞ է, թե ինչո՞ւ է եթերը լցվել ստեղծագործական ու արտադրական ճնշարկումներով, ժողովանման նիստերով ու զրույցներով: Ցավոք, պիտի հիասթափեցնեմ. խոսքը ընդհանրապես զրույցի մասին չէ, այլ եթերի ու հեռուստադիտողի միջեւ կայանալիք, ենթադրվող երկխոսության մասին է: Այս հաշվարկով է կառուցվում սցենարը. հեռուստադիտողի հարցուպատասխանի՝ հաշվարկով, այդ երկու կողմերի ներքին հաղորդակցման զգայարաններով: Այստեղ է նրա բովանդակ բարդությունը, որ ոմանք շաս են դյուրացրել... Մեր միտքը պարզաբանենք մասնագիտական գրականությունից մի օրինակով: ...Թերզարգացած երկրներից մեկում լրագրողը մտնում է դպրոց ու հարցնում.

– Ի՞նչ տարբերություն կա կինոյի եւ հեռուստատեսության միջեւ:

Աշակերտը, ում դիմել էր լրագրողը, մի պահ մտածեց ու պատասխանեց.

– Կինոյում մարդիկ իրար հետ են խոսում, հեռատեսիլում՝ մեզ հետ:

Ասված է կարճ ու սպառիչ, բայց ահա թե ինչպես է «հատվել շղթան», ահա թե ինչ է նշանակում անվերջ բառբառել մշակութային ազգ լինելուց, իսկ մանուլով, հանդեսներով խոսք չբացել նորամուտ այս բնագավառի, փորձի, հայտնագործած ճշմարտությունների մասին, ասուլիս չանել, ձեռքբերումը չընդհանրացնել... Նրա շեն ու շռայլ սեղանից բոլորս ենք օգտվել՝ իբրեւ «հաց հանապազօրյա», բայց «մոռացել», իսկ ավելի ծիշտ՝ անփույթ ենք եղել: Առավել «անփույթ» է գտնվել տնօրեններից մեկը, որ «տոհմական» աստվածություն տածելով բոլոր արհեստավարժների ու փորձառուների հանդեպ, փութացել է «հներին» զանգվածաբար փոխարինել ոչ միայն անփորձ լրագրողներով, այլեւ դեռեւս ուսանողական նստարանին գտնվողներով «բիմ» հավաքելո՞ւ թե անհեռատեսության պտուղը, որ այսօր բոլորս ենք ճաշակում... Շարունակելով երկխոսության բնույթի մասին մեր խոսքը, ասենք, որ այսօր փաստորեն հարություն է առել այն «մեռելը», որ դժվարին դիմադրությամբ հաղթելով «թաղել» էր փորձ էկրանը. ռադիոյի ազդեցությունը, «ռադիոականությունը». վկա՝ խոսակցական հարաճուն հաղորդաշարերը: Իսկ ի դեպ. մասնագետները բոլորովին այլ կարծիքի են, գտնում են, որ եթերային հաղորդման միայն 7 տոկոսն է ընկալվում խոսքի միջոցով, 15-ը՝ ձայնի ու հնչերանգի, երանգավորման, իսկ 55 տոկոսը՝ տեսապատկերի... Կարծում եմ. համեմատությունը բոլորովին էլ մեր օգտին չէ: Գուցե ա՞յդ պատճառով են սղվել կամ «վերասերվել» որոշ ուսանելի, հեռաֆրֆրական, անհամեմատ օգտակար հաղորդաշարեր («8-րդ հրաշալիք», «Մեր լեզուն, մեր խոսքը», պոեզիայի, դասական երաժշտության ժամերը եւ այլն):

Ակնհայտորեն հայկական հեռատեսիլը գնում է դեպի մանուլը. լրատվությունը: Մեծ ուշացումով են ստեղծվում դրամատիկական ներկայացումներ: Եվ ի՞նչ է մնում. լրատվություն, զվարճաբանություն՝ սեքսի, ծեծուջարդի տեսաժապավենի, «հարվածային դոզայով»... Դիմացիր ամեն կարգի հոգսերից պատառպատառ եղող հայ հեռուստադիտող: Կարծես այս ամենը հիչ էր, հիմա էլ՝ բոլոր «խողովակներով» ազատ սեռ է տարփողվում, սրհիդիզ... որպեսզի ես չմնանք հանկարծ, «հանընթա՛ց լինենք»:

Ողջախոհ ազգ չե՞նք. անդայման այո. այսպես կասենք բոլորս, մի «ա՛ծու» ենք. պիտի իմանանք, թե աշխարհի առաջընթացից ի՞նչ վերցնենք: Այսօր մենք ոչ թե պիտի նիրհենք, այլ արթանանք, հակառակը կլինի, ոչ թե ես մնալը, այլ, ընդհանրապես, ճով անցնելը... Դառնանք եթերին: Այսօր այն ունի հարուստ (գուցե մի հիչ ծանրաբեռնված), հեռաֆրֆրականորեն կառուցված հաղորդումներ, որոնց արժեքրկում է հաղորդավարական մատուցումը: Ճյուղավորվել է եթերը, ստեղծվել են նոր ալիքներ, որտեղ ուշադրությունը համար թանկ է իր եւ գործի պատիվը, հեռուստադիտողի համարումը: Ժամանակը փաստեց, որ եթերի երբեմնի ավանդույթներից ոչ մեկի կորուստն այդքան զգալի չի եղել հեռուստադիտողի համար, որքան «թատերական երկուաբթիներ»-ի: Այդ նպատակով էր, որ «եթեր» շաբաթաթերթի բարի ընդառաջումով մենք ցանկացանք արծարծել թանկ վերհուշեր՝ «Ցոլքեր երանելի երկուաբթիներից» հոդվածաշարով: Լավ է, որ տնօրինությունը սահմանել է կիրակնօրյա թատերաժամ եւ ակնթարթ է այն պահպանելու ջանքը, որ կայանում է ունեցած ներկայացումների կրկնությամբ: Ընդամենը մի քանի տարի առաջ ստեղծված այդ ներկայացումները խլված ժամանակի վագրից անգնահատելի հարստություն են եւ դրանց մշակութային ու պատմական արժեքը դժվար է գերագնահատել: Դրանք պետք է արտագրել-նորոգել ու պատրաստել, հաղորդել, սակայն պետք է նաեւ նորը ստեղծել, որ վերտին չընդհատվի շղթան... Թատրոնը մյուս արվեստներից, որոնք վերացական են (ասենք, ինչպես երաժշտությունը), ամենաներգործունն ու մատչելին է, քանզի կոնկրետ անհատների ու ճակատագրերի մասին է, որին դժվար է անհաղորդ մնալ:

Մի հարց եւս: Խելացի ու հեռատեսորեն պետք է օգտագործել «դրսում» ունենալիք ելույթի առիթը: Ի՞նչ կարող ենք շահել, երբ հարեւանների՝ Կիկաբիծեի ու Տամարա Գվերցեթելլիի զմայլելի գովազդի կողքին ներկայացնում ենք «Մեր բակը-2»-ի բնավ էլ ոչ շահեկան ու ճաշակով դրվագները... Ավելի քան տխուր էր մարտի 8-ին նվիրված «Միասին» ծրագրում մեր ունեցած մասնակցությունը: Այստեղ մեր չարակամ հարեւանի ներկայացուցիչը միանգամայն պերճախոս ներկայացնում էր իր ազգի կանանց ու օջախի արբությունները, իսկ մենք երեւացինք բազմամուսնությամբ եւ... հարեմով: Այսքան էլ աբսո՞ւրդ:

Եվ վերջինը: Վերջին երկու տասնամյակում մենք քանիցս համոզվեցինք, թե որքան ադեսաբեր է լինում փորձ էկրանի տնօրինության հաճախակի փոփոխությունը: Ոչ մի պահ չպետք է մոռանալ այս բնագավառի արտասովոր բարդությունը, այն, որ հայտնի բարեմասնություններից զատ, մարդ այստեղ պետք է համակողմանի զարգացած անհատ լինի, քաղաքական-իրավական-գիտական-գեղարվեստական գիտելիքների անհրաժեշտ պաշարի կողքին, կարողանա կողմնորոշվել նաեւ շարունակ փոփոխվող ու մշահաճ հեռուստատեխնիկայի հարցում: Ուրեմն պետք է նշանակելուց հետո մարդուն թողնել հասու լինի տիրույթի առանձնահատկություններին, հմտանա: Պատահա՞կ էր, որ արտասովոր արգասավոր եղավ գործունեությունը մի նախագահի (Ստեփան Պողոսյան), որն անփոփոխ տնօրինեց ամբողջ 17 տարի: Այս տիրույթը եկողին պետք է օգնել, եւ մեծապես հոգալ հայ արդի հեռուստէկրանի գեղագիտությունը վերաստեղծելու եւ պահպանելու համար:

ՎԱՐՈՒԺ ԳԲԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍԻՐԻԱ

Հայկական հեռուստատեսությունը նկարահանումներ է կատարել Դեր-Զորում

ԵՐԵՎԱՆ, 20 ԱՊՐԻԼ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սիրիայի Արաբական Հանրապետության անկախության 52-րդ տարեդարձի կապակցությամբ, որը նշվեց օրերս, Հայկական ազգային հեռուստատեսությունը անցած շաբաթ երեկո ներկայացրեց այս տարվա ապրիլ ամսին Սիրիայում նկարահանված մի վավերագրական ժապավեն, որի հեղինակներն են ռեժիսոր եւ օպերատոր Գագիկ Համբարձումյանը եւ հեռուստալրագրող Մերի Զարյանը: Երեւան վերադառնալով նրանք բերել են ոչ միայն այդ ֆիլմը, այլեւ Դեր-Զոր աշխարհի սրբացած մասունքներ, որոնք հանձնելու են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին:

Պատմելով Սիրիայի կառավարության նախաձեռնությամբ կազմակերպված այդ ուղեւորության մասին Մերի Զարյանը ասաց հետեւյալը:

Այն, ինչ մենք գիտենք Դեր-Զորի մասին տարբեր աղբյուրներից, այդ թվում եւ Անդրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմից (որի տեքստն, ի դեպ հայերեն է թարգմանել Մ. Զարյանը-Վ. Ս.), այլ է, մեր տեսածը այլ: Մենք տեսանք իսկական անապատը, որը ավազ չէ, այլ կավախառն անապատ, ամայի, չոր, ու պատկերացրինք, թե ինչ է կատարվել այնտեղ 1915 թվականին...

Բլուրը, որ մենք բարձրանում էինք Մաշտոց քահանայի հետ, մի պահ քարացրեց մեզ. մենք ավազներին խառնված ոսկորների կույտ տեսանք, այսինքն, մինչեւ հիմա, այսքան տարի անցնելուց հետո, Հայոց ցեղասպանությունը հուշ ու հիշողություն չի դառնում, կենդանի ընչում է երկրի երեսին: Դրանք վերջերս են հայտնաբերվել, շինարարական աշխատանքներ կատարելիս: Պատկերացրեք մեր ապրումները, երբ ավազներից վերցնում էինք մասունքները Երեւանի թանգարան բերելու համար: Այս վայրում էլ, ի հիշատակ նահատակների: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ռ-ի-ի թեմի նախաձեռնությամբ շատ [illegible] լեցիկ մատուռ է կառուցվել:



Մենք Սիրիայի տեղեկատվության նախարարության հյուրն էինք, մեզ համար մշակված էր հատուկ ծրագիր, սակայն ազնիվ հայրենակիցների եռանդուն ջանքերով կարողացանք լինել այդ անապատում: Դա բավականին բարդություններ էր կապված, նույնիսկ աշխարհագրական իմաստով, այնքան էլ հեշտ չէր երկար ճամփա կտրել Դամասկոս-Դեր-Զոր հատվածում:

Դեր-Զորից բացի նկարահանել ենք ամբողջ Սիրիան, Հալեպը որպես հայ համայնքի կենտրոն, որպես Սիրիայի երկրորդ, հին քաղաքը, որի խորհրդանիշը բերդին, ինչպես ասացին տեղում, դիպել է նաեւ Տիգրան Մեծի ոտքը: Հալեպում եւ, ընդհանրապես, Սիրիայում բացակայում է «ազգային փորձամասնություն» հասկացողությունը, բոլորն ապրում են նույն օրենքներով, նույն հավասար իրավունքներով: Մենք անմոռանալի հանդիպում ունեցանք Բերիո թեմի առաջնորդ Սուրեն արքեպիսկոպոս Գաբարոյանի՝ խելացի, իմաստուն, մարդամոտ ու կյանքով լի հայ մարդու, հայ մտավորականի հետ:

Նկարահանել ենք վաղ քրիստոնեության մի քանի կենտրոններ, այդ թվում Մաալուլա գյուղը, որտեղ մարդիկ հին արամերեն են խոսում. դա այն լեզուն է, որով ժամանակին խոսում էր ամբողջ Մերձավոր Արեւելքը եւ որով քարոզում էր Հիսուս Քրիստոսը: Այնտեղ, Սուրբ Սարգիս եկեղեցում մենք «Հայր մեր» լսեցինք արամերեն: Մենք Սիրիայից դրախտային հոս ենք առել, Արեւելքի բույրը ու մեր ֆիլմն էլ պատահական չէ, որ անվանել ենք «Արեւելքի սիմֆոնիա»:

ՎԱՌԵՆ ՍԱՌՆԹԵՏՆ,
Արմենպրեսի թղթակից

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Բեռնհարդ Մյուլլեր. «Հայաստանի մարզիկները կհասնեն հաջողությունների»

Մարզական բնագավառում հայ-գերմանական կապերի խորհուրդման նախագծի շրջանակներում Գերմանիայի արտաքին գերատեսչության եւ Գերմանիայի ազգային օլիմպիական կոմիտեի հանձնարարությամբ շուրջ 20 օր Հայաստանում էր գտնվում ձեռքի գնդակի հեղինակավոր մասնագետ Բեռնհարդ Մյուլլերը: Նա մի քանի տարի մարզել է ԳՖՀ-ի կանանց եւ աղջիկների հավաքականները, որոնք հաջող ելույթներ են ունեցել օլիմպիական խաղերում, աշխարհի առաջնություններում: Նրա ղեկավարած թիմերը հաղթող են դարձել Գերմանիայում անցկացված մրցումներում: Բեռնհարդ Մյուլլերն արդեն ավելի քան 10 տարի Բավարիայի ձեռքի գնդակի միության մարզիչն է, պատասխանատու է մարզիչների վերապատրաստման եւ հավաքական թիմի համար: Նա տեսական դասընթաց վարեց մեր մարզիչների հետ, գործնական պարապմունքներ անցկացրեց ձեռնագնդորդների հետ: Նա գնդակներ, դարպասացանցեր, մարզահագուստ նվիրեց մեր հավաքական թիմերին: Պրն Մյուլլերը ներկա գտնվեց նաեւ Սուրեն Թումանյանի հուշամրցաշարին, որտեղ հանդես եկան տղամարդկանց չորս թիմեր: Հայտնի մասնագետի Գերմանիա մեկնելու նախօրյակին զրուցեցինք նրա հետ:

- Պրն Մյուլլեր, ի՞նչ կարծիքի եք հայկական ձեռքի գնդակի մասին:

- Նախ ասեմ, որ սիրով եկա Հայաստան: Ընդհանրապես մեծ հետաքրքրություն ունեմ այլ երկրների, դրանց մշակույթի ու մարդկանց նկատմամբ: Իսկ ձեր հինավուրց երկիրն ավելի քան ձգող էր: Եվ այստեղ հանդիպեցի բարյացակամ, հյուրասեր մարդկանց:

Ինչ վերաբերում է ձեռքի գնդակին, պետք է ասեմ, որ վիճակը վատ չէ: Ունեք լավ մասնագետներ: Ունեցել եք նաեւ բարձրակարգ խաղացողներ (դա շատ լավ էր երեւում վետերան ձեռնագնդորդների խաղից), սակայն խզում է առաջացել տարբեր սերունդների մարզիկների միջեւ: Բայց այստեղ տեսա բավականին օժտված, հեռանկարային երիտասարդներ, որոնք կարող են բարձրակարգ խաղացողներ դառնալ:

- Դուք եղաք նաեւ Գյումրիում, Վանաձորում...

- Ուզում էի ծանոթանալ նաեւ մյուս քաղաքներում տիրող վիճակին: Իհարկե, միայն երեւանով ոչինչ չի ստացվի: Մարգածելը պետք է տարածում գտնի, զարգանա հանրապետության մարզերում:

- Իսկ ինչի՞ վրա պետք է հատկապես մեծ ուշադրություն դարձնեն մեր ձեռնագնդորդները:

- Կարեւոր են բոլոր բաղադրիչները եւ տեխնիկան, եւ տակտիկան, եւ ֆիզիկական եւ հոգեբանական պատրաստականությունը: Հաջողության հասնելու համար անհրաժեշտ են լուրջ, կանոնավոր մարզումներ: Անելիքները շատ են: Բայց ես համոզված եմ, որ Հայաստանի մարզիկներն անհրաժեշտ աշխատանքի դեպքում կհասնեն հաջողությունների:

- Պրն Մյուլլեր, մեր ձեռնագնդորդներից ո՞ւմ կցանկանայիք նշել:

- Շատ լավ խաղացողներ կան թե տղամարդկանց, թե կանանց թիմերում: Սակայն այժմ չեմ ուզում առանձնացնել այս կամ այն մարզիկին:

Հարցազրույցի ընթացքում դիտեմ բարձր կարգի մրցումներում: Իսկ զուցեւ ինչ-որ կերպ կհամագործակցենք նաեւ հեռագայում: Հաջողություն եմ մաղթում Հայաստանի մարզիկներին, բոլորիդ:

Հարցազրույցը վարեց
Ռազմիկ Ավագյանը

ԹԵՆԻՍ

Մրցաշարերը հաջորդում են իրար

Պրոֆեսիոնալ թենիսիստների միության (ATP) շարքի երկու խոշոր մրցաշարեր ավարտվեցին:

Բարսելոնի մրցաշարում, որտեղ մրցանակային հիմնադրամը 950 հազար դոլար էր, հաջող հանդես եկավ ամերիկացի Տոդ Մարտինը: Նա վճռական խաղում 6-2, 1-6, 6-3, 6-2 հաշվով հաղթեց իսպանացի Ալբերտ Բերասատեգիին եւ նվաճեց գլխավոր մրցանակը: Նշենք, որ եզրափակիչի ճանապարհին Բերասատեգին պարտության էր մատնել Եվգենի Կաֆելնիկովին (Ռուսաստան), Կառլոս Մոյային (Իսպանիա):

Անսպասելի ավարտ ունեցավ Տոկիոյի մրցաշարը: Նույնիսկ քառորդ եզրափակիչ չհասան մրցումների ֆավորիտներ Մայքլ Չանգը (ԱՄՆ), Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա), Թիմ Հենմանը (Անգլիա): Իսկ եզրափակիչում հանդիպեցին համաշխարհային դասակարգման ցուցակի 67-րդ թենիսիստ Բայրոն Բլեքը (Զիմբաբվե) եւ այդ ցուցակի 109-րդ հորիզոնականում գտնվող Անդրեյ Պավելը (Ռումինիա): Վերջինս համեմատաբար հեշտ հաղթանակ տարավ (6-3, 6-4, հաշվով) վերջերս Դեւիսի գավաթի խաղարկությունում աչքի ընկած Բլեքի նկատմամբ եւ գրավեց առաջին տեղը: Տոկիոյի մրցաշարի մրցանակային հիմնադրամը 864 հազար դոլար էր:

Բորիս Բեկեր

Սոչիի մայրաքաղաքում մրցեցին նաեւ կանայք: Հուրախություն տեղի մարզասերների, երկրորդ անգամ մրցաշարի հաղթող դարձավ ճապոնուհի Այի Սուգիյաման: Նա վճռական խաղում 6-3, 6-3 հաշվով պարտության մատնեց ամերիկուհի Կարին Սարարիուին:

Աշխարհի ուժեղագույն թենիսիստները համարյա չեն հանգստանում: Մոնտե Կառլոյում մեկնարկել է «Սուպեր-9» շարքի շատ ուժեղ մրցաշար, որի մրցանակային հիմնադրամը համարյա երկուսուկես միլիոն դոլար է: Մասնակցում են համարյա բոլոր ուժեղագույնները բացառությամբ աշխարհի թիվ 1 ռակետ, անցյալ տարվա նմանօրինակ մրցաշարի հաղթող Մարչելո Ռիոսի: Չիլիացին վերջին պահին հրաժարվեց հանդես գալ Մոնտե Կառլոյում պատճառաբանելով վնասվածքը: Դա նշանակում է, որ աշխարհի լավագույն թենիսիստի կոչումը կրկին կանցնի ամերիկացի Փիթ Սամպրասին, որն այժմ Ռիոսից հետ է մնում ընդամենը 45 միավորով: Նշենք, որ մրցաշարի հաղթողը ոչ միայն դրամական խոշոր պարգեւ կստանա, այլեւս 504 կետով կավելացնի իր միավորների պաշարը:

Անցկացված առաջին խաղերից առանձնացնենք Բորիս Բեկերի հաղթանակը հոլանդացի Յան Սիմերինկի նկատմամբ: Բեկերը տանուլ տվեց առաջին խաղափուլը 5-7, սակայն հաջորդ երկուսում 6-3, 6-1 հաշվով վստահ առավելության հասավ: Հետաքրքիր է, որ երբեմնի աշխարհի թիվ 1 ռակետ Բեկերը դեռ անցյալ տարի հայտարարել էր մեծ սպորտին հրաժեշտ տալու իր մտադրության մասին:

ԼՈՒՐԵՐ

Ստեղծվել է հատուկ կոմիտե

Ինչպես հայտնեցին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի լրատվության բաժնից, ՀԱՕԿ-ի հասցեով ստացվել է նամակ Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի Հայ առաքելական եկեղեցուց: Նամակում ասվում է, որ եկեղեցու հովանու ներքո ստեղծվել է 2000 թվականին Սիդնեյում կայանալիք ամառային օլիմպիական խաղերի կոմիտե, որը մշակել է հատուկ ծրագիր Հայաստանի օլիմպիականներին օգնելու նպատակով: Ծրագիրը ուժի մեջ կլինի մինչեւ օլիմպիադայի սկսվելը եւ օլիմպիադայի ընթացքում: Կոմիտեն իր նամակում առաջարկում է մի շարք ծառայություններ: Նամակը ստորագրել է կոմիտեի քարտուղար Սոնյա Բողոսյանը: ՀԱՕԿ-ը քննարկել է նամակը եւ իր առաջարկություններն է ուղարկել Սիդնեյ:

Կմասնակցեն Եվրոպայի առաջնությանը

Ապրիլի 23-26-ը Սանկտ Պետերբուրգում կանցկացվի մարմնամարզության Եվրոպայի տղամարդկանց անհատական-թիմային առաջնությունը: Եվրոպական առաջնությունում Հայաստանի երիտասարդական հավաքականը հանդես կգա լրիվ կազմով: Մեր չորս մարմնամարզիկները՝ Հարություն Մերդինյանը, Գեւորգ Դեւոնդյանը, Սերգեյ Ոսկանյանը, Արթուր Զաքարյանը կմասնակցեն անհատական եւ թիմային մրցաքայլերին: Մեծահասակների մրցումներում հանդես կգան մեր հանրապետության երկու ներկայացուցիչներ՝ Գեւորգ Գեւորգյանը եւ Արման Մկրտչյանը: Մարմնամարզիկների հետ Սանկտ Պետերբուրգ են մեկնել մարզիչներ Տիգրան Պետրոսյանը եւ Սոս Սարգսյանը:

Առաջին փուլից հետո

Մայրաքաղաքի «Գրանդ» ակումբի մարզադահլիճում ավարտվեցին բասկետբոլի Հայաստանի կանանց առաջնության առաջին շրջանի առաջին փուլի մրցումները: Առավել հաջող հանդես եկան հանրապետության չեմպիոնուհիները՝ «Գրանդ» ակումբի բասկետբոլիստուհիները: Նրանք շահեցին բոլոր 4 հանդիպումները եւ 8 միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը: Ինչպես երեւում է, նախապատրաստական շրջանում մայրաքաղաքի թիմը լրջորեն է պարապել եւ այս մրցաշարում լավ մարզավիճակում էր: Կրկին վստահ, ակտիվ խաղ ցուցադրեցին «Գրանդի» առաջատարներ Կարինե Սուքիասյանը, Կարինե Սարգսյանը: Թիմը նաեւ լավ համալրում է ստացել՝ ի դեմս Լիանա Բաղդասարյանի: Անհամբերությամբ էր սպասվում «Գրանդի» եւ Արարատի «Ավարայրի» հանդիպումը: Սակայն վերջինս իր հնարավորություններից չափազանց ցածր հանդես եկավ այդ խաղում, եւ «Գրանդը» գերազանցեց 121-78 հաշվով: «Ավարայրը» 7 միավորով աղյուսակի երկրորդ տեղում է: Հաջորդ տեղերում հետեւյալ թիմերն են 3. ՖԻՄԱ (Երեւան)՝ 6, 4. «Պոլիտեխնիկ» (Երեւան)՝ 5, 5. Է. Գյումրի՝ 4 միավոր: Երկրորդ փուլի մրցումները տեղի կունենան Գյումրիում, մայիսի 13-18-ը:

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Կանանց առաջին սպարտակիադան

Մայրաքաղաքի «Հայաստան» մարզական միության մարզադաշտում անցկացվեց թեթեւ ատլետիկայի կանանց առաջին սպարտակիադան: 1998 օլիմպիական մրցումների միջազգային ֆեդերացիան (ԻԱԱՖ) հայտարարել է կանանց տարի, եւ մրցումներն անցկացվում էին այդ միջոցառումների շրջանակներում: Սպարտակիադայում հանդես եկան Գյումրիի, Վանաձորի, Կապանի, Արտաշատի, Մասիսի, Երեւանի (2 թիմեր) 100-ից ավելի մարզուհիներ: Սպարտակիադայի բացման հանդիսավոր արարողությունը հիանալի էր, տոնական: Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը մրցումների մասնակիցներին, վետերան թեթեւատլետուհիներին հանձնեց միջազգային ֆեդերացիայի պատվոգրերն ու հուշանվերներ:

Սպարտակիադայի ծրագրում ընդգրկված էին 10 մրցաձեւեր: Վազքի մրցումներում հաղթող դարձան հետեւյալ մարզուհիները. 100 մետր - Սիրա Թոքոյան 12,2 վրկ, 400 մ - Պայծառ Պետրոսյան 1 ռոպե 0,04 վրկ, [illegible] - Աննա Նաստրյան 2 ռոպե 17,7 վրկ, 3000 մ - Քրիստինե Սիկոյան 11 ռոպե 1 վրկ: Փոխանցումավազքում բոլորին գերազանցեց Երեւան-1 թիմի խաղացողը: Հեռացատկի եւ եռացատկի հատվածներում ուժեղագույնը Տատյանա Հովհաննիսյանն էր: Գնդի հրման եւ սկավառակի նետման մրցումներում հաղթեց Աննա Հակոբյանը, իսկ նիզականետման մրցումներում՝ Արուսյակ Գեւորգյանը:

Սպարտակիադայի արդյունքներով կկազմավորվի հանրապետության թիմը, որը հունիսի 6-8-ը կմասնակցի Բելգրադում կայանալիք Եվրոպայի գավաթի խաղարկության մրցումներին:

Աշխարհի նոր ռեկորդ

Մարաթոնային վազքի մրցումներ անցկացվեցին ԱՄՆ-ի Բոստոն եւ Հոլանդիայի Ռոտերդամ քաղաքներում:

Վերջինս հատկանշական էր նրանով, որ այնտեղ կանանց վազքի համաշխարհային ռեկորդ գրանցվեց: Քենիացի Տեղլուա Լառաուֆան 42 կմ 195 մ մրցաշարածությունը հաղթահարեց 2 ժամ 20 ռոպե 47 վայրկյանում՝ 19 վայրկյանով գերազանցելով դեռեւս 13 տարի առաջ նշանավոր նորվեգուհի Ինգրիդ Քրիստիանսենի սահմանած ռեկորդը:

Բոստոնի ավանդական մարաթոնում (այն անցկացվում է 102-րդ անգամ) մեկնարկի դուրս եկան 11,5 հազար մասնակիցներ: Ութերորդ տարին անընդմեջ հաղթեց Քենիայի ներկայացուցիչը: Եզրագիծը առաջինը հասնեց Մոդո Տանկուին, որի արդյունքն է 2 ժամ 7 ռոպե 34 վայրկյան: Նրանից մի փոքր ետ մնաց նույնպես քենիացի Ջոն Խաչիբեսուն: Իսկ կանանց մրցապայքարում երկրորդ տարին անընդմեջ հաղթող դարձավ օլիմպիական չեմպիոնուհի Ֆաթումա Ռոբան (Եթովպիա)՝ 2 ժամ 23 ռոպե 21 վայրկյան արդյունքով:

Բոստոնի մարաթոնի հաղթող Ֆաթումա Ռոբան

digitised by A.R.A.R.@

ՕՐՎԱՐԻԵՏԵՐՈՎ

ԿԱՐԵՐ

Պետությունն ամուր է ոչ միայն նախարարներով, այլեւ օգնականներով ու աշխատակազմով

Նախագահի նոր եւ միակ օգնականը

Վերջին օրերին հանրապետությունում տեղի ունեցան մի շարք կարեւոր փոփոխություններ, որոնցից ամենակարեւորների թվում է Արմեն Գեւորգյանի նշանակումը ՀՀ նախագահի օգնական: Մինչ այդ նա հանրապետության վարչապետի օգնականն էր: Նա ծնվել է 1973 թ. հուլիսի 8-ին Երեւանում բանվորի ընտանիքում: 1990 թ. գերազանցությամբ ավարտելով մայրաքաղաքի թիվ 28 միջնակարգ դպրոցը, ընդունվում է Օրենբուրգի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որտեղից երկու տարի անց տեղափոխվում Լենինգրադ Հյուսիս-արեւմտյան կադրային կենտրոնի պետական մունիցիպալ կառավարման բաժինը: Հետագայում այդ բուհը վերանվանվում է Սանկտ Պետերբուրգի պետական ծառայության ինստիտուտ, եւ Ա. Գեւորգյանն այն ավարտում է գերազանցությամբ 1993 թ., սանալով անձնակազմի կառավարման եւ աշխատանքային հարաբերությունների հոգեբանության մենեջեր մասնագիտացում: 1993-96 թթ. ուսանել է Ռոստովի Գերցենի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում: Ավարտելով պատրաստում է թեկնածուական թեզ (թեման «Մոդելավորող խաղը որպես իրավական նորմերի նկատմամբ ա[illegible] դասարանցիների արժեքային [illegible] գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1995-96 թթ. սովորել է Նիդերլանդներում Թվենթեի համալսարանի մագիստրատուրայում, որն ավարտելով ստացել է կրթական եւ վերապատրաստման համակարգերի ծրագրավորման մագիստրոսի կոչում: 1997 թ. հունվարից ՀՀ վարչապետի օգնականն էր:

ՀՀ նախագահի օգնականների ինստիտուտը երեւան է եկել 1991 թ., պետության ղեկավարի պաշտոնի ստեղծմամբ: Օգնականների թիվը երբեմն մշտական չի եղել եւ, ըստ երեւույթի, որեւէ փաստաթղթում ամրագրված էլ չի եղել: Տարբեր ժամանակահատվածներում նախագահի օգնականներ են եղել Լեւոն Զուրաբյանը (1991-98 թթ.), Ռուբեն Շուգարովը (1991-92 թթ.), Վահան Տեր-Ղեւոնդյանը (1991-93 թթ.), Արմեն Այվազյանը (1992-93 թթ.), Արմեն Մելքոնյանը (1993-95 թթ.), Սամվել Կարաբեկյանը (1994-96 թթ.), Ավետիս Ավագյանը (1997-98 թթ.): Միաժամանակ Լ. Զուրաբյանը 1994-98 թթ. կատարել է ՀՀ նախագահի մամուլի քարտուղարի պարտականությունները: Հիշեցնենք, որ 1992-93 թթ. մամլո քարտուղար եղել է Ռ. Շուգարովը, իսկ 1993-94 թթ. Արամ Աբրահամյանը:

Պարզվել է՝ չեն նշանակվել

«Ազգ»-ի ապրիլի 18-ի համարում գրել էինք, որ ՀՀ կառավարության մամուլի ծառայության ղեկավար է դարձել Արմեն Սաթոյանը եւ իրեն օգնում է Լուսինե Նազարյանը: Այդ տեղեկատվությունը հիմնված էր ի [illegible] Սակայն օրերս վարչապետի աշխատակազմի բարձրաստիճան մի պաշտոնյա մեզ հայտնեց, որ մամուլի ծառայությունում որեւէ նշանակում տակավին չի կատարվել եւ համապատասխան որոշում կկայացվի մոտ ապագայում:

Լրագրողների բարեկամը՝ ֆինանսի աշխատակազմի ղեկավար

Մեկ լուր, որը կհետաքրքրի լրագրողներին: Նրանց քաջ ծանոթ Սեւակ Մանուկյանը նշանակվել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար՝ նախարարության գլխավոր վարչության պետի կարգավիճակով: Հիշեցնենք, որ Ս. Մանուկյանը եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի մամուլի ծառայության ղեկավարի տեղակալ, հանրապետության կենտրոնական բանկի մամուլի քարտուղար, «Ֆինանսներ եւ բանկեր» թերթի առաջին գլխավոր խմբագիր:

Ներողամտության ակնկալիքով

Կառավարության ծեւավորման օրվա հետ կապված ցայտնոտում երեկվա համարում տպագրված մեր նյութից թյուրիմացաբար դուրս է մնացել հետեւյալ կարեւոր պարբերությունը.

Եթե խոսելու լինենք դիպլոմների մասին, ապա պարզապես դասական կրթություն է ստացել նախարար Վ. Օսկանյանը, որը Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտից բացի ավարտել է Բոստոնի Թավթց եւ Հարվարդի համալսարանները եւ իրավունքի ու դիվանագիտության Ֆլեթչերի դպրոցը եւ [illegible] Լավ ճարտարագիտության, քաղաքական գիտությունների, դիվանագիտության ու իրավունքի մագիստրոսի աստիճան:

Հայցում ենք արտգործնախարարի ու մեր ընթերցողների ներողամտությունը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

Թուրք իսլամիստներին նոր հարված հասցվեց

Թուրքիայում նոր հարված հասցվեց իսլամական արմատականությանը: Այդ երկրի դատարանը դատապարտեց Ստամբուլի քաղաքապետ Էրդոհանին 10 ամսվա բանտարկության ռասայական կրոնական ատելություն սերմանելու համար: Էրդոհանը պետք է դառնար նախկին վարչապետ Էրբաքանի հետնորդը եւ գլխավորեր Թուրքիայի իսլամական շարժումը: Անցյալ տարվա դեկտեմբերին ունեցած ելույթներից մեկում Էրդոհանը կոչ արեց իր կողմնակիցներին դիմել զանգվածային անհնազանդության եւ հայտարարեց, որ դժվարին պահերին մզկիթները կդառնան զինանոցներ, մինարեթները սվիններ, իսկ հավատացյալները անհավատների դեմ մղվող սրբազան պատերազմի ջիհադի զինվորներ: Հենց այդ խոսքերի համար էլ շուրջ 5 ամիս տեւած դատավարությունից հետո Էրդոհանը դատապարտվեց բանտարկության: Սակայն դա միայն թվաց իշխանություններին եւ, ըստ միջազգային լրատվամիջոցների հաղորդագրությունների, Թուրքիայի ՆԳՆ-ն հայտնեց 20 գործարարների կալանավորման մասին: Այդ գործարարները, որոնք «Ազատ գործարարների առեւտրային պալատի» անդամներ էին, իրենց ողջ հարստությունն օգտագործում էին շարիաթի քարոզչության, իսլամական դպրոցների եւ հաստատությունների շինարարության, Ղուրանի ուսումնասիրման կուրսերի կազմակերպման եւ ալլահանպաստ այլ ձեռնարկումների համար: Այդ 20 գործարարները մեղադրվում են նաեւ կրոնական ատելություն սերմանելու, քաղաքական իսլամին նյութական եւ բարոյական աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաեւ աշխարհիկ պետականությունը տապալելուն ուղղված գործունեություն ծավալելու մեջ: Տեղի ունեցած մեկնաբաններ ուշադրություն են դարձնում այն փաստին, որ այս վերջին իրադարձությունները համընկան իսլամական արմատականության դեմ մղվող պատերազմի հետ: Այդ ուժեղացումը հետեւեց երկրի վարչապետի Յըլմազին թուրք գեներալների կողմից արված նախազգուշացմանը, թե վարչապետը բավարար չափով չի պայքարում իսլամիստների դեմ: Վերհիշելով Թուրքիայի վերջին տասնամյակների պատմությունը Յըլմազն ընդունմամբ մոտեցավ գեներալների նախազգուշացմանը եւ խոստացավ, որ իր կառավարությունը կանի ամեն ինչ, որպեսզի Թուրքիայում պահպանվի իշխանության աշխարհիկ մոդելը: Եվ անում է:

Պատրաստեց
ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆԸ

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

Անգլերեն չորս փուլերով

Տուրմանյուր փուլի տեւողությունը՝ **(I եւ II փուլերի համար)** մայիսի 19-ից հուլիսի 18-ը, երեքշաբթի, հինգշաբթի օրերին ժամը 17:00-20:00 եւ շաբաթ օրը ժամը՝ 14:00-17:00
(III եւ IV փուլերի համար) մայիսի 18-ից հուլիսի 17-ը, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժամը՝ 17:00-20:00
վարձը՝ 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

Անգլերեն դիվանագետների համար

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների արդյունավետ հաղորդակցման հմտությունները հետեւյալ բնագավառներում.
- *տեղեկության փոխանակում, ներկայացում եւ հայցում*
- *սոցիալական փոխազդեցություն եւ հաղորդակցման ոճազմավարություն*
- *վարվելակարգ եւ միջազգային մշակույթի ներգործություն*
- *ենթատեքստ եւ բանախոսություն հանրության առաջ*
- *դպրոցական փաստաթղթերի ձեւակերպում*

տեւողությունը՝ մայիսի 18-ից հուլիսի 17-ը, երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը՝ 16:30-18:30
վարձը՝ 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

Անգլերենի դասընթաց «Օսկար» շահած ֆիլմերի ցուցադրմամբ

Այս դասընթացը նախատեսված է անգլերենի միջինից բարձր գիտելիքներ ունեցողների համար: Կուսուցանվեն գրելու, կարդալու, խոսելու եւ լսելու հմտությունները: Կցուցադրվեն վերջին տարիներին «Օսկար» մրցանակ շահած ֆիլմերը, որոնց քննարկումները եւ բացատրությունները կտրվեն դասընթացի ժամանակ
տեւողությունը՝ մայիսի 19-ից հուլիսի 18-ը
երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, ժամը՝ 17:00-20:00 եւ շաբաթ օրը ժամը 14:00-17:00
վարձը՝ 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

■ Դասընթացների գրանցումը եւ վճարումը տեղի կունենան Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) 19ա սենյակում, ժամը 9:00-ից 17:00:
■ Յուրաքանչյուր դասընթացին կընդգրկվեն առաջին 15 դիմորդները:
■ Բացի անգլերենի առաջին փուլից, անգլերենի մյուս դասընթացներում ընդգրկվելու համար դիմորդները պետք է հանձնեն անգլերեն լեզվի քննություն, որը տեղի է ունենում յուրաքանչյուր ամսվա առաջին երկուշաբթի օրը, ժամը 13:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

JOB OPPORTUNITIES!

USAID/Caucasus, Yerevan Office has job opportunity for the following position:

Driver: Qualifications/Requirements: Completion of secondary school; at least six months prior chauffeur experience; good English language skills (Level III); fluency in Russian and Armenian; thorough knowledge of local traffic laws and area traffic patterns; a valid Armenian driver's license (Category B and C). Submit resume and application form (available at USAID Office) to Ms. Kim Tomsen, USAID/Caucasus, 16 Aigedzor St., Yerevan, tel: 26-34-97. **Announcement closure date is May 5, 1998.**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան Ընկերությունը աշխատանքի է հրավիրում աշխատասեր եւ աչալուրջ մարդկանց (ցանկալի է բարձրագույն կրթությամբ):
Տեղերը սահմանափակ են:
Տեղեկությունների համար զանգահարել
56-28-63

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ
Armenian Airlines

«Հայկական ավիաուղիներ ավիաընկերությունը» մայիսի 2-ից յուրաքանչյուր շաբաթ օր իրականացնելու է Երեւան-**Միլան**-Երեւան կանոնավոր չվերթը:
Տոմսերը կարող եք ձեռք բերել «Հայկական ավիաուղիներ ավիաընկերության» բոլոր գործակալություններից:
Տեղեկությունների համար զանգահարեք
58-39-69

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 23-ին, ժամը 14-ին, գրողների միության կլոր սրահում տեղի կունենա բանաստեղծ
Շտեֆան Գեորգեի
բանաստեղծությունների ժողովածուի ներկայումը (թարգմանիչ Աստ Ալեքսանյան):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:
Հեռ՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ)

Ուզո՞ւմ եք նիհարել
անվնաս, առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:
Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով
52-93-53
ժամը 9-18-ը

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 806. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 21.04.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@